15 ՄԱՐՏ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 44(4663)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Ադրբեջանը չի խորհում եւ ոչ մի մեթոդից

Նպատակն արդյունքի հասնելն է, թե՞ զազմական լուծումների նախապատրաստվելը

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները այսօր ժամանում են Երեւան՝ հերթական այցելությամբ քննարկելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների հետագա քայլերն ու նաեւ թեման:

Ինչպես մարտի 9-ին հայտարարել էին համանախագահները, Ռոբերտ Բրադկեն, Իգոր Պոպովը եւ Բեռնար Ֆասիեն տարածաշրջան այցելությամբ անդրադառնալու են ոչ միայն բանակցային ընթացքին, այլեւ շփման գծում տեղի ունեցած միջադեպերին ու դրանց հետաքննության խնդրին: Համանախագահներն իրենց հայտարարությամբ նշել էին, որ մարտի 5-ի Սոչիում տեղի ունեցած Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան նախագահների հանդիպումից առաջ եւ հետո շփման գծում պատահած միջադեպերը պետք է նախ հաստատվեն, ապա նաեւ հետաքննվեն:

Մարտի 5-ի հանդիպմանը գնահատական տալիս Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը** մարտի 12-ին Ծաղկաձորում հայտարարեց, թե Սոչիի հանդիպումը կարելի է համարել հանգրվանային: «Կա բանակցային հստակ հիմք, եւ կան կարճաժամկետ պայմանավորվածություններ: Երկարաժամկետ առումով, իհարկե, բանակցությունները շարունակվելու են, եւ կարծես թե Սոչիում ի վերջո նշմարվեց, թե ինչ ճանապարհով կարող ենք առաջ շարժել», ասել էր նախագահը ի պատասխան լրատվամիջոցների հարցերին:

Նրա խոսքերով, կարճաժամկետ պայմանավորվածությունները շատ կարեւոր են այն առումով, որ նախ դրանք ուղղված են հրադադարի ռեժիմի ամրապնդմանը, պահպանությանը, եւ երկրորդ՝ կարող են լակմուսի դեր կատարել ու ցույց տալ, թե ինչպես են կողմերն իրենց պարտավորությունները կատարում:

Սերժ Սարգսյանը հայտարարել էր. «Տեւական ժամանակ մենք խոսում էինք հենց հրադադարի ռեժիմի պահպանման, վստահության միջոցառումների ավելացման մասին, որովհետեւ միշտ կարելի է կարճ ժամանակում լարվածություն ստեղծել, իսկ խաղաղության գործընթացը շատ ավելի ծանր է, եւ հիմա մենք, ըստ մեր պայմանավորվածությունների, մտնում ենք հենց այդպիսի գործընթաց, որտեղ պետք է կարողանանք լարվածությունը թուլացնել, ինչը հնարավորություն կտա նորմալ բանակցություններ վարել, ավարտել այդ բանակցությունները, եւ եթե հաջողություն լինի՝ հասնել մեր նպատակներին»: Տես էջ 3

Տեր-Պետրոսյանը պետք է ընտրություն կատարի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աշխարհն անհանգիստ է՝ երկրաշարժ ու ցունամի, Քադդաֆի ու նարնջագույն հեղափոխությունների տարածում, անգամ երկրաշարժ ու հրաբուխ Ադրբեջանում՝ սա երկրագունդը դարձնում է անհանգիստ ու անհարմարավետ տուն մարդկանց համար: Աշխարհի մեր անկյունում եւս հանգիստ չէ: Ընդդիմությունը նորից ուզում է փողոց դուրս բերել ընդդիմադիր զանգվածին, նպատակն անհայտ է՝ եթե սոցիալական բողոքի, թանկացումների եւ դժվար ապրելակերպի դեմ՝ սրանք կարգավորելու, այնուամենայնիվ, լծակներն իշխանության ձեռքին են: Եթե պահանջելու են իշխանությունից՝ մեթոդներ գտնել մեր կյանքը կարգավորելու, եթե ուզում են ազդելու նրա վրա՝ սրա մեջ ռեսուրս կա: Բայց եթե այլ նպատակներ կան, եթե սպերային կառավարող կա, որ հարմար պահին ազդանշան է տալու օրանժ հեղափոխության համար՝ այդ քյանդրբազության վտանգը, կարծում ենք, ընդդիմության առաջնորդը բոլորից լավ պետք է իմանա, որովհետեւ հեղափոխություններին հաջորդող քաոսի մեջ ինքը մեկ անգամ եղել է արդեն, տեսել , թե որքան դժվար է քանդվածը վերականգնելը: Բայց այն ժամանակ բնակչությունը այսպես աղքատ չէր, բացի այդ՝ ինքնիշխան պետություն ունենալու համար էինք պայքարում, իսկ հիմա շատ շերտեր կան, որոնք ոչինչ չունեն կորցնելու, եւ նրանց համար միեւնույն է՝ անկառավարելի՞ է՝ չունեն, թե՞ կառավարելի է՝ չունեն: Ահա այսպիսի իրավիճակում, արտասական ընդդիմությունը գնում է գարնանային երկրորդ հանրահավաքին, ընդ որում նախորդ անգամ մի թուղթ էին ներկայացրել՝ վերջնագիր, հիմա այդ թղթի ժամկետը լրացել է, ու մարտի 17-ին բողոքավոր զանգվածը հավանաբար պետք է ինչ-որ որոշում պահանջի իր ղեկավարներից: Ահա այսպիսի իրավիճակում նախագահ Սարգսյանը լրագրողների հետ հանդիպելով, թվում է, պետք է կոչ արձագանքեր ընդդիմությանը, նրա վերջնագրին, նրա ղեկավարներին... բայց տեղի ունեցավ հակառակը: Նախագահն ասում է. «Մենք պատրաստ ենք լսել քննադատություններ, առաջարկություններ, միայն թե այդ քննադատությունը եւ առաջարկությունները ուղղված լինեն կոնկրետ խնդիրների լուծմանը, իրատեսական լինեն, կյանքում օգտագործելի լինեն, այլ ոչ թե այդ քննադատությունները ու առաջարկությունները արվեն, որպեսզի դրանցով շահարկեն, կարողանան էլեկտորատ ձեռք բերել, որպեսզի կարողանան ինչ-որ գործընթացների վրա ազդել: Թեեւ դա էլ է նորմալ երեւույթ: Տես էջ 2

ՕՐԵՐԻ ՀՇՏ

Ատոմակայան

Դժբախտությունը, ասում է ժողովուրդը, առանձին չի գալիս: Ճապոնիայի պարագայում դրանք եկան երեքը միասին՝ երկրաշարժ, ցունամի, ատոմակայանի վթար: Մեկը մյուսից սարսափելի, մեկը մյուսից աղետաբեր՝ մարդկային, հոգեբանական, նյութական ծանրագույն հետեւանքներով:

Անշուշտ, դեռ վաղ է խոսել մարդկային կորուստների մասին. դեռ տասնյակ հազարավոր դիակներ կան ավերակների տակ, հարյուր հազարավոր անհետ կորածներ, որոնց վերջնական հաշվեկշիռը կպարզվի հետագա շաբաթներին: Վաղ է նաեւ նյութական վնասների հաշվեկշիռը ներկայացնելու, թեեւ արդեն խոսվում է 170 մլրդ դոլարի կորուստների մասին, առանց հաշվարկելու գալիք ամիսներին եւ, գուցե, տարիներին արձանագրվելիք կորուստները՝ փակված գործարանների, խափանված ձեռնարկությունների եւ ենթակառուցվածքների պատճառով: Նախնականորեն պարզ է կարծես մեկ բան՝ ցունամին առավել զոհեր է խլել ու կործանումներ առաջացրել՝ քան երկրաշարժը: Դա նշանակում է, որ երկիրը շատ ավելի լավ էր նախապատրաստված դիմագրավելու երկրաշարժը, քան ցունամիի ամեհի ալիքները:

Թվում էր, որ երկիրը է՛լ ավելի լավ էր նախապատրաստված ատոմային վտանգին՝ Հիրոսիմա ու Նագասակի տեսած երկիրը, ի գործի դնելով իր ամենաբծախնդիր ճարտարագիտական հանճարը, ընդմիշտ փակած պիտի լիներ ատոմային ճառագայթման վտանգի ճանապարհը երկրում: Այդպես էլ կար, ավտոմատ սարքերը երկրի մյուս ատոմակայաններում 8.9 մագնիտուդ հզորությամբ ցնցման հետ միաժամանակ անջատվեցին, բացի մեկից՝ Ֆուկուշիմայի ատոմակայանից, որի 4 ռեակտորներից 3-ում հովացման համակարգը դադարեցնեց, տեղի ունեցավ պայթյուն, ճառագայթի արտահոսք, թեեւ, բարեբախտաբար, ատոմակայանի պաշտպանիչ պատյանը կամ սարկոֆակը, ըստ պատասխանատուների, դեռեւս մնում է անխոցելի: Սակայն ոչ ոք չի կարող ասել, թե ինչ է պատահելու առաջիկա օրերին, անգամ ժամերին:

Ու մինչ ճապոնացի մասնագետներն այժմ ոգի իր բռին պայքարում են զսպելու հետագա բռնկման սպառնալիքը Ֆուկուշիմայի ատոմակայանում, մենք չենք կարող չմտածել ու չմտահոգվել մեր՝ Մեծամորի ատոմակայանի վիճակով ու ճակատագրով: Անշուշտ, հիշում ենք, որ վերագործարկումից հետո մեր ատոմակայանը միջազգային նյութական ու մասնագիտական օգնությամբ լրացուցիչ ապահովական սիստեմներով օժտվեց: Բայց հիշում ենք նաեւ, թե ատոմակայանների ո՛ր սերնդին է պատկանում այն՝ Չեռնոբիլի՛: Գիտենք նաեւ, որ էներգակիրների սեփական ռեսուրսների սակավության պատճառով ատոմակայանի փակումը եւ հետագայում նոր ատոմակայանի շինարարության ծրագրերից հրաժարումը բացասական ինչպիսի ազդեցություն կունենա մեր աղքատ երկրի վրա: Սակայն չենք կարող սեյսմիկ վտանգավոր գոտում գտնվող փոքրիկ մեր երկրում հանդուրժել որեւէ համակեցություն հին, նոր կամ նորագույն որեւէ ատոմակայանի հետ: Ճապոնական դժբախտությունը դա է թելադրում, ոչ միայն մեզ, այլեւ, անգամ, Իտալիային, Ֆրանսիային ու մանավանդ Գերմանիային: Մինչդեռ մենք նույնիսկ ազգաբնակչությանը էվակուացնելու տարածք չունենք:

Գեթ այս անգամ փորձենք սովորել այլոց դժբախտությունից:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Հայ փրկարարների խումբը պատրաստ է մեկնել Ճապոնիա

Մարտի 11-ին Ճապոնիայում տեղի ունեցած հզոր երկրաշարժից եւ դրան հաջորդած ավերիչ ցունամիից անմիջապես հետո, դեպքի վայրում փրկարարական գործողություններին մասնակցելու նպատակով, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ լրիվ պատրաստականության է հայտարարված Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության 25 մարդուց բաղկացած ջոկատը: Ինչպես հայտնում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությունից, հայ փրկարարները պատրաստ են մեկնել Ճապոնիա եւ օգնել աղետից տուժածներին: Փրկարարական խմբի անդամներից 22-ը՝ միջազգային չափանիշներին համապատասխան հանդերձավորմամբ, կմեկնեն աղետի գոտի, երբ Ճապոնիայի կողմից կլինի հաստատում: Աղետից հետո ՄԱԿ-ը հայտարարել էր. «Աղետների գնահատման եւ հակազդման թիմի» հավաք: Մեր տարածաշրջանում նշված թիմի անդամ են ՀՀ ԱԻ նախարարության երկու բարձրաստիճան սպաներ, որոնք, հայտնել են աղետյալ երկիր մեկնելու իրենց պատրաստակամության մասին:

Մ. Մ.

Ֆրանսիայում ձերբակալված 7 դրամանենգներից մեկը հայ է

Նիցցա քաղաքում անցյալ չորեքշաբթի եւ հինգշաբթի ձերբակալվել են դրամանենգության մեջ ամբաստանվող հանցախմբի յոթ անդամներ: Ֆրանսիական մամուլը հաղորդում է, որ կիրակի օրը յոթ կասկածյալներից երեքը բանտարկվել են (մնացյալ չորսը բանտարկվել էին հենց սկզբից): Այս երեքից մեկը հայ համայնքի ազդեցիկ դեմքերից է: Խոսքը հավանաբար արեւելյան երկրների մաֆիաներից մեկի «օրենքով գողի» մասին է: Որոշ տեղեկությունների համաձայն, կեղծ թղթադրամների մատակարարը իտալական «Կամորռան» է, իրացնողը՝ հայկական մաֆիան: Հետաքննությունը շարունակվում է Ալպ Մարիտիմ նահանգում, մասնավորապես Մանտոն քաղաքի ոստիկանությունում, ինչպես նաեւ Մարսելում: Կեղծ թղթադրամները (10, 20 եւ մանավանդ 50 եվրո), որոնց ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 100 հազար եվրո, ցածր գներով իրացվել են մասնավորապես խաղատներում:

Ստեփանակերտի օդանավակայանը կգործի մայիսի 9-ից

Թռիչքը կտեւի 35 րոպե, տոմսի արժեքը՝ 15.000 դրամ

Ստեփանակերտի օդանավակայանը, որի վերակառուցման աշխատանքները շարունակվում էին շուրջ մեկ տարի, կշահագործվի մայիսի 9-ից: «**Ազգ**»-ին ԼՂՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչությունից փոխանցեցին, որ ավարտվել են շենքի հարդարման աշխատանքները, շարունակվում է տեխնիկական վերազինումը, ինչին կհաջորդի տարածքի ասֆալտապատումը: Արցախում են գտնվում ինքնաթիռների թռիչքն ու վայրէջքն ապահովող սարքավորումները: Նախատեսվում է շահագործել ինքնաթիռների թռիչքների ու վայրէջքների կառավարման կենտրոն:

Ստեփանակերտի օդանավակայանին կից կգործի ավիաուսումնական կենտրոն. նպատակը որակյալ եւ մասնագիտացված անձնակազմի պատրաստումն է: Ստեփանակերտի օդանավակայանը կկարողանա սպասարկել ժամում 100 ուղեւորի: Սկզբնական փուլում օդանավակայանից կիրականացվի միայն Ստեփանակերտ-Երեւան-Ստեփանակերտ չվերթը, սակայն հեռանկարում կլինեն նաեւ այլ ուղղություններով թռիչքներ: Ուղեւորափոխադրումները կիրականացնի «Արցախավիա» ավիաընկերության 50-տեղանոց 3 SRJ-200 ինքնաթիռներով, որոնցից յուրաքանչյուրի արժեքը կազում է 15-16 մլն դոլար:

Ինչպես «Ազգը» գրել էր ամիսներ առաջ, Ստեփանակերտում վերակառուցվելիք օդանավակայանը ճախրող թռչունի տեսք ունի: 1200 քմ ընդհանուր տարածք զբաղեցնող օդանավակայանը Ստեփանակերտից 8 կմ հեռու է: Երկհարկանի գեղեցկուհին կունենա բար, սրճարան, ավտոկայանատեղի, բուժկետ, VIP սրահ հատուկ հյուրերի համար:

Օդանավակայանի վերակառուցման ընդհանուր արժեքը կազմում է 5 մլն դոլար: Երեւան-Ստեփանակերտ թռիչքը կտեւի 35 րոպե, տոմսի արժեքը չի գերազանցի 15.000 դրամը:

Հ. Հ.

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

«Ժառանգությունը»՝ արտահերթ եւ բաց համաժողովներով

«Ժառանգություն» կուսակցությունը այսօր հրավիրում է բաց համաժողով, որտեղ ելույթ է ունենալու կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը: Իսկ կիրակի տեղի է ունեցել «Ժառանգության» խորհրդի ընդլայնված նիստը, որից հետո կուսակցության տարածած ծավալուն հաղորդագրության մեջ նշված է, թե օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների օրակարգերը շարունակում են չարաշահել Հայաստանի քաղաքացիների եւ հայ ժողովրդի արտաքին եւ ներքին պահանջներն ու ակնկալիքները, արտաքին քաղաքականությունը տեւապես զիջում է պետական ինքնիշխանությունն ու ազգային շահը, իսկ ներքին քաղաքականությունը խորացնում է անհավասարությունը: Բացի դրանից էլ՝ փետրվարի 17-ին, շփոթելով նախագահի նստավայրն ու պետական պարտականությունը կուսակցական գրասենյակի գործառույթի հետ՝ կոալիցիոն երեք կուսակցությունների ղեկավարները ստորագրեցին հակասահմանադրական եւ հակաժողովրդավարական հուշագիր, որը օրախնդիր բոլոր մրցահրավերներին պատասխանելու փոխարեն ընդամենը խոստովանում է գլխավոր կուսակցապետի ու հիշյալ ուժերի՝ ժողովրդին պատկանող իշխանությանը եւս 7 տարով նույն կազմով ու հարաբերակցությամբ տիրանալու մտադրությունը, ինչը որակապես նոր վիճակ է ստեղծել երկրում: Թվարկելով այս եւ մի շարք այլ պարագաներ՝ ընդլայնված նիստը հայտարարել է, որ երկրում ստեղծված արտակարգ իրավիճակը ենթադրում է արտակարգ լուծումներ. հետեւում են մանրամասն դրույթներ՝ հնարավոր բոլոր եղանակներով պայքարելու «իշխանության օրինական եւ արտահերթ նորովի ձեւավորելու համար», մենք միայն նշենք, որ վարչության նախագահի ճշգրտած ժամկետում այս բոլորի հետ կապված «Ժառանգությունն» արտահերթ համագումար կհրավիրի:

Մ. Խ.

Ձերբակալվել է ՀԱԿ ակտիվիստ, բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրյանը

Ըստ ոստիկանության տարածած հաղորդագրության՝ մարտի 13-ին ժամը 17-ին իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու կասկածանքով ոստիկանության կենտրոնական բաժին բերման է ենթարկվել բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրյանը: Բերման են ենթարկվել նաեւ այդ պահին ավտոմեքենայում գտնվող Պողոս Կրմզյանն ու Միսակ Հովակիմյանը: Ըստ հաղորդագրության՝ Սամսոն Խաչատրյանը Երեւանի Մաշտոց-Կորյուն փողոցների խաչմերուկում չի ենթարկվել ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին, դիմադրություն է ցույց տվել եւ հարվածել՝ մարմնական վնասվածք պատճառելով ոստիկաններից մեկին: Նույն օրը Սամսոն Խաչատրյանը ձերբակալվել է, հարուցվել է քրեական գործ, իսկ նրա հետ եղած անձինք ազատ են արձակվել: Ս. Խաչատրյանը ՀԱԿ-ի ակտիվիստ է: Ըստ նրա փաստաբան Արա Զաքարյանի՝ Ս. Խաչատրյանն իր ձերբակալության հիմքում քաղաքական ենթատեքստ է տեսնում եւ հրաժարվել է ցուցմունքներ տալուց:

Ավելի ուշ հաղորդագրություն տարածեց Հայաստանի քաղբանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտեն, թե «իրականում ընդդիմադիր հայցվորի տեր ՀԱԿ ակտիվիստ, հայտնի բռնցքամարտիկ, ԽՍՀՄ բազմակի, Եվրոպայի կրկնակի չեմպիոն եւ աշխարհի գավաթակիր Սամսոն Խաչատրյանը ոչ թե բերման է ենթարկվել, այլ առեւանգվել է», եւ դրանից շատ ավելի ուշ է հայտնի դարձել, որ նա ոստիկանությունում է: Ըստ կոմիտեի՝ Խաչատրյանին ներկայացվող մեղադրանքը, թե նա մարտի 1-ի հանրահավաքին չի ենթարկվել ոստիկանության աշխատակցի պահանջներին, այլ տեսք ունի՝ նշված ոստիկանը հանրահավաքի ժամանակ եղել է քաղաքացիական հագուստով, սադրիչ վարքագիծ է դրսեւորել, ընդհարում հրահրել, որի գործողությունների արդյունքում, բազմաթիվ վկաների ներկայությամբ տեղի է ունեցել քաշքշուկ: Մի խոսքով՝ քաղբանտարկյալների եւ հալածյալների կոմիտեն հայտարարում է, որ Ս. Խաչատրյանի ձերբակալությունը նախապես կազմակերպված սադրանքի հետեւանք է, նրա քաղաքական գործունեության հետ է կապվում, եւ պահանջում է ազատ արձակել նրան:

Մ. Խ.

Տեր-Պետրոսյանը պետք է ընտրություն կատարի

1-ին էջից

Ընդդիմության դերը կայանում է հենց նրանում, որ տեսնի խնդիրները, քննադատի եւ հաջորդ ընտրություններում ունենալով կողմնակիցների մեծ բանակ՝ դառնա իշխանություն եւ այսպես շարունակ»: Հետաքրքրական է, թե սա ում է ուղղված՝ արդյո՞ք ՀԱԿ-ին, նրա ղեկավարին ու նրա վերջնագրին, իհարկե՝ այո: Միաժամանակ՝ Սարգսյանը հանրահավաքներին ու նրա մասնակիցներին էլ կոչս որակումներ չի տալիս. «Կարծում եմ, որ ընդհանուր առմամբ քաղաքական գործընթացները ճիշտ ճանապարհով են գնում: Համարում եմ, որ գոնե վերջին 1-2 տարիների ընթացքում որոշակի ձեւաչափեր են ձեւավորվել, որոշակի գործընթացներ մտել են բնականոն հուն: Հանրահավաքներն անցնում են կոռեկտության սահմաններում, եւ ճիշտ ճանապարհը դա է: Կարծում եմ, որ թե՛ իշխանությունները, թե՛ ընդդիմադիրները ճիշտ հետեւություններ պետք է անեն անցյալի սխալներից, որպեսզի դրանք չկրկնվեն: Ասածս որպես ռեւերանս չընդունեք, բայց, փա՛ռք Աստծո, շատ պարագաներում թե՛ այս կողմում, թե՛ այն կողմում կան մարդիկ, ովքեր ունեն մեծ փորձ, գիտեն, թե ինչ է նշանակում պետություն եւ պետականություն, ովքեր կարող են տեսնել այն սահմանը, որը կա Հայրենիքի, պետականության, ազգային խնդիրների եւ քաղաքական նկրտումների միջեւ: Կարծում եմ, որ մեզնից յուրաքանչյուրի համար քաղաքական նպատակները չպետք է լինեն գերխնդիր: Իհարկե, այդպիսի նպատակներ պետք է լինեն, հակառակ պարագայում տարօրինակ կլիներ քաղաքական գործունեությունը, բայց նորից եմ կրկնում, մենք բոլորս պետք է հստակ տեսնենք այդ սահմանը, բոլորս՝ յուրաքանչյուրս, պետք է մեր հերթին անենք ամեն ինչ, որպեսզի անցյալի սխալները չկրկնվեն»: Ի՞նչ կա այս բոլորի տակ, արդյո՞ք նախագահ Սարգսյանը լավ հաշվարկված սխեմա է ուղղել դեպի ընդդիմություն եւ նրա առաջնորդին՝ մանեւրելու տեղ չթողնելով վերջինիս, թե ինչ որ դու ես ասում, մենք էլ գիտենք, ու ելքեր փնտրում ենք, դու քո անելիքը ցուցանիր: Արդյո՞ք, ինչպես ինտերնետային ֆորումներում են ենթադրություններ արվում՝ առաջին եւ երրորդ նախագահները կարող են (էին) պայմանավորվել, քանի որ փորձ ունեն, պետության եւ պետականության, ազգային եւ քաղաքական նկրտումների սահմանը գիտեն, եւ պայմանավորվածությունն ընդամենը տանելու է բնական ու հերթական ընտրությունների, վերահսկելի հանրահավաքների եւ բողոքի ուղղորդման քաղաքակիրթ ճանապարհի... այլապես չէր ասվի հանրահավաքների կոռեկտության մասին: Այսինքն, երբ Ռազմիկ Զոհրաբյանը կամ Էդուարդ Շարմազանովը կոչս գնահատականներ են տալիս վերջնագրին ու այն բարձրաձայնողին՝ սա կարելի է տեղավորել քաղաքական նկրտումների մեջ, բայց երբ երկրի ղեկավարն ասում է, որ կա սահման քաղաքական նկրտման ու պետության ու պետականության մեջ, ու մեղմ որակումներ է տալիս ընդդիմությանը, սա կարելի է քաղաքական նկրտումից վեր՝ ազգային շահի մեջ դասել: Այդպիսով՝ նախագահ Սարգսյանը փաստորեն սահմանափակում է ՀԱԿ առաջնորդի տեղաշարժվելու հարթությունը. վերջինս երկու ելք ունի մարտի 17-ի հանրահավաքում՝ կամ ավելի սրել եւ կոչս պատասխանել նախագահ Սարգսյանին ու հանրահավաքավորին կոչել գործողությունների, կամ հակառակը, ընդունել փորձ ունենալու եւ սխալների վրա սովորելու նախագահ Սարգսյանի մարտահրավերը, եւ մարդկանց ուղղորդել պետականությունը, ու ոչ թե քաղաքական նկրտումը (էլ չասած՝ նարնջագույն սադրանքը) գերադասելու ճանապարհով... դեպի հերթական ընտրություններ:

Նախագահ Սարգսյանի՝ ընդդիմադիրներին ուղղված խոսքը արդեն երեկ տարբեր մեկնաբանությունների էր արժանացել: Մեկն ասում էր՝ Սերժ Սարգսյանի նախընտրական արշավի մեկնարկն էր: Հակառակը՝ նրա նշած ոլորտներում խոսացած փոփոխությունների մասով: Ընդդիմադիրներն այդ ամենը բացատրում են ընդդիմության ակտիվության հետեւանքով ստեղծված ակտիվ հասարակական ֆոնով՝ գումարած աշխարհում հայտնի գործընթացների ազդեցությունը: Եթե նկատենք, որ արտահերթ ընտրությունների իդեա ֆիքսը, բացի արտաքին հրահրիչների զորաշարժերից, այլ ավելի մեծ ռեսուրս չունի, սա արդեն ասել ենք, այսինքն՝ չի հավակնի գոնե 100 հազար մարդկրիտիկական զանգվածի չգոյությունը ոչ մի շանս չի տալիս ընդդիմությանը. այս տրիզմայով դատելիս կարելի է նախագահ Սարգսյանի ասածները՝ իր բարեփոխիչի կերպարի ձեւավորման անհրաժեշտ ատրիբուտների մեջ դիտարկել, թեեւ այդ բարեփոխումներն արդեն իսկ ուշանում են, որովհետեւ նա երեք տարի ուներ իր նշած ոլորտներում փոփոխություններ անելու, իսկ դրանք չեն իրականացվել:

Փաստորեն՝ ուշադիր պետք է հետեւել մարտի 17-ի հանրահավաքին՝ Եթե Տեր-Պետրոսյանը սրի, նշանակում է, փորձ ու սխալներից սովորելն իզուր է ասված նրա մասին, եւ նա փորձում է ոտք դնել Սերժ Սարգսյանի նշած սահմանից դեպի նարնջագույն հորիզոններ:

ԱՆԵՌՈՒՏՏ, ԵԹԵ...

Հայաստանում ԵՄ-ի աջակցությամբ իրականացվող բարեփոխումներին նոր թափ կհաղորդվի

Մարտի 14-ին կայացել է Հայաստանում Եվրոմիության խորհրդավական խմբի խորհրդի նիստը, որը վարել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, եվրոպական կառույցների հետ Հայաստանի համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը:

Նրա գնահատմամբ՝ Հայաստան-ԵՄ քաղաքական համագործակցությունն արդյունավետորեն զարգանում է, եւ դրան նպաստում է ԵՄ խորհրդավական խմբի հետ արդյունավետ աշխատանքը. «Հատկապես կարեւոր է քաղաքական համագործակցության խորացումը Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ՝ ասոցացման համաձայնագրի կնքմամբ: Կարեւոր է նաեւ ԵՄ-ի հետ արդարադատության, ազատության եւ անվտանգության հարցերով հատուկ ենթակոմիտեի ստեղծումը, խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գործընթացը նոր թափով առաջ մղելը, որը ենթադրում է լուրջ բարեփոխումներ Հայաստանում, այդ թվում՝ առկա բյուրոկրատական արգելքների վերացում, հարկային, մաքսային եւ այլ համակարգերում բարեփոխումներ: 2010 թվականին մեկնարկել են բարեփոխումները Հայաստանի դատաիրավական համակարգում: Հաստատվել է ոստիկանության համակարգում բարեփոխումների լուրջ ծրագիր, որը շարունակվելու է այս տարի: Այս տարի նախատեսվում է մարդու իրավունքների ազգային ծրագրի հաստատումը, որը մեր համագործակցության կարեւոր փուլերից մեկն է: Լուրջ քայլեր են ձեռնարկվել ԵՄ անդամ երկրներ մուտքի արտոնագրերի տրամադրման կարգի դյուրացման եւ ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման ուղղությամբ»:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լյուցենբերգերն էլ իր հերթին կարեւորել է ասոցացման համաձայնագրի կնքման ուղղությամբ կատարվելիք աշխատանքին մեծ ուշադրություն դարձնելը:

ԵՄ խորհրդավական խմբի նոր ղեկավար Անտի Հարտիկայնենը ներկայացրել է խմբի տեխնիկական առաջադրանքը: Մինչեւ հունիս ամիսը նա կհավաքագրի շուրջ 20 նոր աշխատակիցների՝ ինչպես երկարաժամկետ եւ կարճաժամկետ միջազգային խորհրդատուների, այնպես էլ՝ փորձագետների Հայաստանից:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

«Ա1+»-ին անհրաժեշտ է 1 մլն 341.140 դոլար

«Ժողովրդական հեռուստատեսություն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները «անկողմնակալ եւ թափանցիկ» հեռուստաձրագրի ստեղծման նպատակով կազմակերպել են դրամահավաք: Նոր հեռուստաձրագիրը պետք է դառնա կարողանա չստացած «Ա1+»-ի հաղորդումների մի մասը: Նախատեսվում են լրատվական թողարկումներ, մշակութային եւ կրթական ուղղվածության ծրագրեր, քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ բանավեճեր:

Ի պատասխան «Ազգ» օրաթերթի հարցի՝ «Ա1+»-ի տնօրեն Մեսրոպ Մովսիսյանն ասաց, որ ծրագրի հեռարձակման մի քանի տարբերակ է մշակվել: Դրանցից ամենաթանկը արբանյակային հեռարձակումն է՝ 1 մլն 350.000 ԱՄՆ դոլար արժողությամբ: «Ժողովրդական հեռուստատեսություն» հիմնադրամը ստեղծվել է 2010-ին «Ա1+» հեռուստաընկերության համար միջոցներ հավաքելու նպատակով: Հեռուստաընկերությունը մասնակցում էր թվային հեռուստահաճախականության տրամադրման մրցույթին, սակայն բավարար քանակությամբ միավոր չստացավ եւ պարտվեց: ՀՌԱՀ-ը փոխարենը կարողը տրամադրեց «Արմնյուզ» հեռուստաընկերությանը:

2010-ի հոկտեմբերին մեկնարկած դրամահավաքն, ըստ Մեսրոպ Մովսիսյանի, առավել կենտրոնացած էր մարդկային ձայների վրա: Այդ ժամանակ դրամահավաքին մասնակցեց 30.000 մարդ՝ հավաքված գումարը մեծ չէր՝ 1 մլն 250.000 դրամ, 5410 ԱՄՆ դոլար եւ 110 եվրո: Այժմ կրկին մեկնարկում է դրամահավաք, որտեղ շատ կարեւոր է ֆինանսական աջակցությունը: Մեսրոպ Մովսիսյանը հաշվարկված է, որ 6 ամսվա ընթացքում հնարավոր կլինի անհրաժեշտ 1 մլն 341.140 դոլար գումարը հավաքել: Հավաքման համար հատուկ բանկային հաշիվ կբացվի:

Տ. Տ.

Հակոբ Հակոբյանն ու Գագիկ Ծառուկյանը

IWP political researches կազմակերպությունը բնակչության քաղաքական ակտիվության եւ տեղեկացվածության մակարդակը ստուգելու համար սոցիոլոգիական հարցումներ է իրականացրել Երեւան, Էջմիածին, Արտաշատ, Աշտարակ, Աբովյան քաղաքներում: «Ո՞վ է ձեր տարածքի պատգամավորը եւ ո՞ւմ կընտրեիք պատգամավոր, եթե ընտրությունները լինեին այս կիրակի, ո՞ր հատկանիշներով կբնութագրեք Ձեր նախընտրած թեկնածուին»՝ հարցերին այսպիսի պատասխաններ են ստացվել՝ Էջմիածնում հարցվողները 50-%ից բարձր արդյունքով նախընտրել են Հակոբ Հակոբյանին (նախկին պատգամավոր): Աբովյանում հարցվողները 50%-ից բարձր արդյունքով նախընտրել են Գագիկ Ծառուկյանին (գործող պատգամավոր): Գագիկ Ծառուկյանի մասով հարցվողների 62-%-ը ընտրությունը հիմնավորել է նրա իրականացրած բարեգործությունները տեսնելով:

Հակոբ Հակոբյանի մասով հարցվողների 59%-ը շեշտել է, որ նա պարբերաբար շփվում է ընտրատարածքի բնակիչների հետ եւ մշտապես հասանելի է նրանց համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

Ինտերնետային սոցցանցերն ու հեղափոխությունը

Թեեւ ինտերնետային սոցիալական ցանցերը տարբեր երկրներում արդեն մաս են կազմում հասարակական ու քաղաքական կյանքի ու դարձել են մարդկանց համախմբելու արդյունավետ միջոց, այնուամենայնիվ ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ **Արթուր Աթանեսյանը** կարծում է, որ հեղափոխության հավանականությունը կախված չէ ինտերնետային սոցցանցերից: Եթե Լիբիայում ինտերնետ չլիներ, մարդիկ դարձյալ կկազմակերպեին բողոքի ցույցեր: Եթե մարդը դժգոհ է, նա բողոքում է անկախ նրանից՝ գրանցված է սոցիալական ցանցում, թե ոչ: Նախկինում մարդկանց համախմբելու համար թռուցիկներ էին բաժանում, իսկ հիմա համախմբելու հնարավորություն տալիս են հենց էլեկտրոնային սոցցանցերը, որոնց միջոցով կարելի է հարյուրհազարավոր հաղորդագրություններ ուղարկել: Արթուր Աթանեսյանի խոսքով՝ ինտերնետային սոցցանցերը պարզապես կրկնօրինակում են իրական սոցիալական ցանցերին. «Եվ հեղափոխությունների առումով դրանց դերը պետք չէ գերագնահատել»:

Երեկ ՄԱԱ-ում սոցիոլոգիայի ամբիոնի վարիչը նշեց, որ մեզանում ինտերնետային այդ ցանցերը նույնպես տարածված են: Հայաստանում մոտավորապես 450 հազար հոգի գրանցված են Odnoklassniki ցանցում, իսկ շուրջ 95 հազար հոգի՝ Facebook-ում (խոսքը ոչ թե հայազգի, այլ զուտ հայաստանցի մասնակիցների մասին է): Facebook-ում իր մասնակիցների թվով աշխարհի երկրների մեջ Հայաստանը զբաղեցնում է 124-րդ տեղը, Վրաստանը՝ 86-րդ, Ադրբեջանը՝ 96-րդ, իսկ Թուրքիան 4-րդ տեղում է: «Սակայն այս դինամիկան ամեն օր փոփոխվում է», ավելացրեց բանախոսը: Վերջին 6 ամսում հայաստանցի մասնակիցների թիվն ավելացել է 5000-ով: Արթուր Աթանեսյանը նաեւ ընդգծեց, որ ինտերնետային սոցցանցերում առավել ակտիվ է երիտասարդությունը՝ ի տարբերություն միջին ու տարեց տարիքի քաղաքացիների, որոնք ավելի շատ դրսեւորում են համայնքային մտածողություն: Facebook-ում գրանցված 18-24 տարեկան հայաստանցի երիտասարդները կազմում են մասնակիցների 40 տոկոսը, իսկ 25-34 տարեկան քաղաքացիները՝ 30 տոկոսը: Ընդհանուր հաշվով՝ այս ցանցում գրանցված են շուրջ 85 հազար երիտասարդներ, որոնք համացանցում բարձրաձայնում են նույնիսկ այնպիսի թեմաներ, ինչպիսին է օրինակ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Ակտիվորեն քննարկվում են տարբեր խնդիրներ, իհարկե, ոչ միայն երիտասարդների մասնակցությամբ:

Ա. Աթանեսյանը տեղին անդրադարձավ էկոլոգիական խնդիրներին, որոնք ավելի ակտիվ քննարկվում են Facebook-ում, քան զանգվածային լրատվամիջոցներում: Այդ քննարկումների միջոցով իշխանությունները կարող են ծանոթանալ մասսայական կարծիքին, եւ դրանք կարող են ծառայել կարեւոր տեղեկատվական հենք որոշումների կայացման համար: Արթուր Աթանեսյանը կարծում է, որ խելամիտ իշխանությունները ոչ միայն չպետք է փակեն այդ ցանցերը, այլեւ խրախուսեն դրանց գործունեությունը եւ օգտվեն ցանցերից: «Կուզենայի, որ մեզանում դրանց փակման մասին նույնիսկ չմտածեին: Փակումը հակառակ էֆեկտը կտա: Եթե այդ ձայնը փակվի սոցցանցում, կբացվի փողոցում», նշեց բանախոսը:

Այնուհետեւ անդրադառնալով Ադրբեջանում ակտիվիստների ձերբակալմանը, որոնք փորձել էին բողոքի համազգային օր կազմակերպել Facebook-ի միջոցով, Արթուր Աթանեսյանը նշեց. «Ճի՛շտ է, ադրբեջանական իշխանությունները սահմանափակեցին երիտասարդների ակցիան, սակայն հավաստած եղեմ՝ երիտասարդները դա չեն ներելու, ու եթե առիթ լինի, կբացվի այդ ընդոսությունը»: Ակտիվիստներին ձերբակալել էին Facebook-ում «Ադրբեջանի մեծ մարդկանց օր» կոչվող սոցիալական էջի բացումից հետո: Նրանց նպատակն էր իրենց երկրում եւս հեղափոխական տրամադրություններ տարածել: Սակայն ձերբակալելով ակտիվիստներին՝ իշխանությունները հասկացրին, որ չեն հանդուրժի բողոքի նման ակցիաները:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լիցենզավորումը՝ ինտերնետի միջոցով

Գործում է լիցենզիաների տրամադրման էլեկտրոնային կարգը

Էլեկտրոնային կառավարմանը, ավելի կոնկրետ՝ էլեկտրոնային տարբերակով իրականացվելիք եւս մեկ ծառայության մասին էր երեկ կառավարության աշխատակազմի ղեկավար **Դավիթ Սարգսյանի** մամուլի ասուլիսը: Խոսքը էլեկտրոնային լիցենզավորման համակարգի մասին էր:

Խոսելով էլեկտրոնային կառավարման համակարգի մասին՝ Դավիթ Սարգսյանը նշեց, որ այդ համակարգի կարեւորությունն այն է, որ մի կողմից թափանցիկ է դարձնում կառավարության գործունեությունը քաղաքացիների համար, մյուս կողմից՝ նվազեցնում շփումները պետական չինովնիկի եւ քաղաքացու, պետական չինովնիկի եւ գործարարի միջեւ:

Ինչ վերաբերում է լիցենզավորման էլեկտրոնային համակարգին, ապա այն արդեն գործում է, եւ լիցենզիա ստանալու համար այլեւս կարիք չկա այցելելու համապատասխան նախարարություն: Հայը կարող է ներկայացվել ինտերնետի միջոցով: Կառավարություն www.egov.am կայքի միջոցով մուտք գործելով «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ»՝ կարելի է տեսնել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն ըստ բնագավառի կամ ըստ գերատեսչության: Գործունեության համապատասխան բնագավառը (անվտանգության, առեւտրի, առողջապահության, գյուղատնտեսության, կրթության, փոստային կապի, մաքսային, շրջակա միջավայրի պաշտպանություն, վիճակախաղեր եւ շահումով խաղեր, տրանսպորտ, քաղաքաշինություն եւ այլ բնագավառներ) ընտրելուց եւ հայտատուի տեսակը (իրավաբանական անձ, ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր) գրանցելուց հետո հայտատուին տրամադրվելու է 12-նիշանոց ծածկագիր: Այն հարկ է պահպանել, քանի որ հետագայում անհրաժեշտ է փաստաթղթերը լրացնելիս կամ հայտի ընթացքին հետեւելիս: Հարկ է նաեւ ծանոթանալ էլեկտրոնային հայտերի ընդունման

կարգին, որտեղ մանրամասնորեն նկարագրվում է, թե ինչպե՞ս, ի՞նչ ժամկետներում է կատարվում լիցենզավորման գործընթացը, ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում դրա համար:

Կառավարության աշխատակազմի ղեկավարը հայտնեց, որ արդեն ստացվել է լիցենզավորման առաջին էլեկտրոնային հայտը՝ քաղաքաշինության բնագավառից:

Այն հարցին, թե ինչպե՞ս են իրականացվելու լիցենզավորման վճարումները, Դավիթ Սարգսյանը պատասխանեց, որ վճարումներն իրականացվելու են բանկերի միջոցով, բայց առաջիկա մեկ ամսվա ընթացքում հնարավոր կլինի վճարումներն իրականացնել պլաստիկ քարտերի միջոցով:

Կառավարության աշխատակազմի ղեկավարն ասաց, որ սա էլեկտրոնային տարբերակին անցնելու հերթական քայլերից է: Հարկային հաշվետվությունների ընդունման, պետական նշանների գրանցման էլեկտրոնային համակարգերն արդեն կան:

Երկու շաբաթ հետո ներկայացվելու էլեկտրոնային ռեգիստրի համակարգը, որը հնարավորություն կտա դարձյալ ինտերնետի միջոցով ձեռնարկություն գրանցել, ֆիրմային անվանում ստանալ, վճարումներ իրականացնել եւ այլն: Եթե դիմում ներկայացնողը էլեկտրոնային ստորագրություն ունի, ապա վկայական ստանալու համար ռեգիստր այցելելու կարիք էլ չի լինի:

Ներկայումս, ըստ Դավիթ Սարգսյանի, 5700 էլեկտրոնային ստորագրություններ կան տրված եւ 3000-ից ավելի ընկերություններ, որոնք հաշվետվությունները ներկայացնում են էլեկտրոնային տարբերակով:

Ինչ վերաբերում է, թե որքա՞ն է էլեկտրոնային համակարգերի հնարավորություններից օգտվողների թիվը, ապա տեղեկացվեց, որ կառավարության www.e-gov.am կայք այցելում են ամսական 18 հազար մարդ: Դավիթ Սարգսյանի տեղեկացմամբ՝ կան բաժիններ, որոնք ունեն ավելի մեծ թվով այցելուներ: Օրինակ՝ նամակի ընթացքին հետեւելու բաժնում օրական այցելուների թիվը մոտ 350 է, իսկ ըստ գերատեսչությունների պետական բյուջեի ծախսման ընթացքը ցույց տվող բաժնում՝ օրական միջինը 100 հոգի:

Կառավարության աշխատակազմի ղեկավարը փաստեց, որ այս տվյալները թեեւ այնքան էլ բարձր չեն, բայց դրանք կավելանան, նկատի ունենալով երկրում ինտերնետի տարածման եւ համակարգիչների համալրման ծրագրերը: Մասնավորապես, եւ լույսը ունեցողը հայտնեց, որ ներկայումս Հայաստանում լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվը 200 հազար է, իսկ անցյալ տարի այդ ցուցանիշը 70 հազար էր: Այսինքն, տարեկան 2-3 անգամ այս թիվն աճում է: Դավիթ Սարգսյանն այն համոզմունքը հայտնեց, որ մեկ տարի հետո լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվը Հայաստանում կլինի 400 հազարի շրջակայքում, իսկ կառավարության նախաձեռնած «Համակարգիչներ բոլորի համար» ծրագրի շնորհիվ էլ էապես կավելանա համակարգչային հագեցվածությունը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԽՈՒՍԱՓՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վրաստանի՝ «միջազգայնորեն ճանաչված սահմաններն» ու ԱՄՆ-ի աջակցությունը Մինսկի խմբին

Միացյալ Նահանգները եվրոպացիների հետ կշարունակի քաջալերել Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների նորմալացումը, ինչպես նաեւ Մինսկի խմբում կմեծացնի իր ներգրավվածությունը՝ աջակցելու Հայաստանին եւ Ադրբեջանին ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելու հարցում:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով ենթահանձնաժողովին ներկայացնելով ԱՄՆ պետքարտուղարության աշխատանքն այդ տարածաշրջաններում՝ պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Գորդոնը մարտի 10-ին անդրադարձել է ինչպես արաբական աշխարհում տեղի ունեցող զարգացումներին, այնպես էլ Աֆղանստանին, Իրանին, Միջին Ասիային ու Հյուսիսային Աֆրիկային, ՆԱՏՕ-Եվրոպա համագործակցությանը, Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաձեւակերպմանը վերաբերող հարցերին:

Ներկայացնելով վերջին երկու տարվա կտրվածքով տարբեր տարածաշրջաններում «գրանցած առաջընթացը»՝ Գորդոնը նշել է, որ, նախ, Միացյալ Նահանգները մեծապես աջակցում է Արեւելյան գործընկերության նախաձեռնությանը՝ ելնելով ծրագրում ընդգրկված երկրներում ժողովրդավարության ամրապնդման հեռանկարներից: Իսկ ինչ վերաբերում է կովկասյան տարածաշրջանին, ապա այդ առնչությամբ Գորդոնը նշել է, որ թեեւ Եվրամիության հետ ԱՄՆ-ի համատեղ ջանքերն արդյունք տալիս են, սակայն դեռեւս առկա են տարածքային վեճեր եւ տնտեսական ու քաղաքական հետագա բարեփոխումները լուրջ խոչընդոտ են Կովկասում առավել կայուն վիճակ ունենալու հարցում:

«Վրաստանում մեր զգալի ներգրավվածությունը եւ մեծ օգնությունը աջակցել են Վրաստանի տրանսֆորմացիային՝ զարգացող ժողովրդավարության ու Աֆղանստանի հարցում ՆԱՏՕ-ի կարեւոր գործընկեր դառնալու առումով», հայտարարել է Գորդոնը: Նրա խոսքերով, եվրոպական գործընկերների հետ ԱՄՆ-ը «կշարունակի իր աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը եւ միջազգայնորեն ճանաչված սահմաններում սուվերենիտետին»:

Կովկասյան այլ հատվածի առնչությամբ Գորդոնը նշել է, որ ԱՄՆ-ը շարունակելու է քաջալերել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացումը, ինչպես նաեւ ԱՄՆ-ը Մինսկի խմբում կմեծացնի իր ներգրավվածությունը՝ աջակցելու Հայաստանին եւ Ադրբեջանին ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելու հարցում: Գորդոնը եզրափակել է. «Մենք գտնում ենք, որ ԱՄՆ-ը եւ Եվրոպան պետք է աշխատեն միասին՝ խուսափելու Եվրոպայում հետագա հակամարտությունից եւ օգնելու տարածաշրջանի երկրներին դեպի ժողովրդավարական ապագա շարժման առնչությամբ, որ ներառում է խաղաղությունն ու առավել բարգավաճ վիճակը»:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանը չի խորհում եւ ոչ մի մեթոդից

1-ին էջից

Սարգսյանի խոսքով, «Կարծես թե եկել է ժամանակը, որ կողմերի նախագահները հստակ պատասխան տան՝ ինչպես են իրենք օգտագործում բանակցային այս փուլը, որն է նրանց նպատակը. նպատակն արդյունքի հասնե՞լն է, թե՞ բանակցություններ վարելու քողի տակ ռազմական լուծումների նախապատրաստվելը»: Այդուհանդերձ, ըստ Հայաստանի նախագահի, Սոչիի հանդիպումը տարբերվում էր այլ հանդիպումներից: «...Բանակցությունները շարունակվում են, կա փաստաթուղթ, որի վրա աշխատում ենք, սա երկարաժամկետ գործընթաց է, եւ կան կարճաժամկետ պայմանավորվածություններ, որոնք մենք պարտավոր ենք կատարել»:

Անդրադառնալով շփման գծի միջադեպերի հետաքննության գաղափարին՝ Հայաստանի նախագահը կարծիք էր հայտնել, թե համանախագահները «շատ լավ հնարավորություն ունեն հետաքննելու բոլոր այն դեպքերը, որոնք տեղի ունեցան մինչ բանակցությունները եւ բանակցություններից հետո, եւ հանրությանը ներկայացնելու, թե վերջապես ինչ է կատարվել»: Հայաստանն, ի դեմս նախագահի, պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել:

Միջադեպերի հետաքննության, շփման գծից դիպուկահարների դուրսբերման կարեւորության մասին է խոսել երեկ, արդեն իսկ Բաքվի օդանավակայան ժամանած ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի արտգործնախարար Ադոմնիուս Ազուբալիսը: Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում 9-ամյա Ֆարիզ Բադալովի զոհվելու միջադեպի առնչությամբ Ազուբալիսն ասել է, թե այդ փաստը եւս մեկ անգամ ապացուցում է, որ դիպուկահարները պետք է հեռացվեն շփման գծից:

Ի դեմ, նույն միջադեպի առնչությամբ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը երեկ ադրբեջանական լրատվամիջոցներին տեղեկացրել է, թե արդեն իսկ հաշվետվություն է ներկայացրել ԵԱՀԿ գործող նախագահին՝ երեխայի մահվան հանգամանքների մասով դիտարկման ժամանակ ձեռք բերված նյութերի հիման վրա: «Իմ խումբը ծանոթացել է դեպքի վայրին, հարցաքննել տեղի հրամանատարներին ու տեղական մարմիններին, մենք պատրաստել ենք հաշվետվություն այդ արդյունքներով: Ես այն արդեն ներկայացրել եմ այժմ Բաքվում գտնվող ԵԱՀԿ գործող նախագահին», ասել է Կասպրշիկը: Նշելով, որ ինքը չունի միջադեպը հետաքննելու մանդատ, Կասպրշիկը ադրբեջանական լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ այդ հարցը քննարկվելու է համանախագահների տարածաշրջան այցելության ընթացքում, եւ այդ քննարկումներով էլ կորոշվի հետագա անելիքը:

Այս միջադեպի կապակցությամբ մարտի 13-ին համատեղ հայտարարություն են տարածել Լեռնային Ղարաբաղի պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարությունները: Կրկին հայտարարություններում հերքվում են Ադրբեջանի մեղադրանքները. «Ցավոք, Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունը չի խորհում եւ ոչ մի մեթոդից՝ շահարկելով անգամ երեխաների կյանքն ու մահը», ասված է ղարաբաղյան կողմի հայտարարության մեջ:

Համատեղ հայտարարության մեջ նաեւ նշվում է, որ ամեն անգամ պետությունների ղեկավարների հանդիպումներից հետո կամ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների՝ տարածաշրջան այցից առաջ ադրբեջանական քարոզչամեքենան թեժացնում է լարվածությունը շփման գծում:

ԼՂՀ-ն պնդում է. «Հերթական օրինակ է դարձել մարտի 10-ին ադրբեջանական կողմի գնդակոծության հետեւանքով Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի ժամկետային զինծառայող Արթուր Աղաբաբյանի մահը: Ընդ որում, միջադեպը տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում ԵԱՀԿ դիտարկումից անմիջապես հետո: Դա վստահության միջոցների ամրապնդմանն ուղղված՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ մարտի 5-ին Սոչիում տեղի ունեցած հանդիպման արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունների կոպիտ խախտում է»:

Տարաբնույթ

2011-ին իրականացման սպասող գերակա խնդիրներ

Որո՞նք են դրանք առանձին ոլորտներում

Հայաստանի կառավարությունը հրապարակեց 2011-ին իր գործունեության միջոցառումների ծրագիրն ու գերակա խնդիրները: Ծրագրում նշված են յուրաքանչյուր միջոցառման անվանումը, նպատակը, կատարման պատասխանատու մարմինը, ժամկետն ու ֆինանսավորման աղբյուրը: Ընդհանուր առմամբ՝ 93 գերակա խնդիր եւ 146 միջոցառում: Դա հնարավորություն է տալիս հասարակությանը, այդ թվում՝ լրատվամիջոցներին, հետեւել եւ վերահսկել միջոցառումների ու գերակա խնդիրների կատարման ընթացքը, պատասխաններ պահանջել կառավարությունից եւ համապատասխան նախարարությունից, եթե որոշ խնդիրներ կամ միջոցառումներ չեն կատարվում:

Նման հնարավորությունը նկատի ունենալով, մասնանշենք կառավարության սանձնած մի քանի կարեւոր գերակա խնդիրներ տարբեր ոլորտներում, որոնք հետաքրքրական կլինեն շատերի համար:

Մասնավորապես, էներգետիկայի ոլորտում այս տարվա համար նախատեսված են ռազմավարական նշանակության մի քանի ծրագրեր, այդ թվում՝ Մեղրու ՀԷԿ-ի շինարարությունը, նոր ատոմակայանի կառուցման համար ներդրողների ընտրության մրցույթ ու բանակցություններ նրանց հետ, Իրան-Հայաստան նավթատար խողովակաշարի կառուցում ու նավթամթերքի տերմինալի կառուցման առաջին փուլ:

Տրանսպորտի եւ կապի ոլորտում 2011-ին իրականացվելիք ծրագրերից արժանահիշատակ են Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու հատվածի կառուցումը, որն էապես կրճատելու է միջհանրապետական եւ միջմարզային երկաթուղային փոխադրումների հեռավորությունները ու արժեքը, հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքների իրականացումը, հյուսիս-հարավ ավտոճանապարհային միջանցքի 3 տրանշների սպացումն ու շինարարական աշխատանքների կազմակերպումը, փոստի կառավարման նոր մոդելի ներդրումը:

Քաղաքաշինության նախարարության համար գերակա խնդիր՝ շինթույլտվությունների կրճատումն ու պարզեցումը ուղղված են լինելու ե՛ւ բիզնեսին, ե՛ւ քաղաքացիներին: Ի դեպ, Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու» վարկանիշային դասակարգման մեջ Հայաստանի դիրքերը բարելավելու ուղղությամբ քայլեր են նախատեսված մի շարք՝ արդարադատության, քաղաքաշինության, էկոնոմիկայի նախարարությունների, պետական եկամուտների կոմիտեի գերակա խնդիրների մեջ: Այդուհանդերձ, այստեղ նախատեսվող հիմնական փոփոխությունները պետք է կատարի էկոնոմիկայի նախարարությունը: Այս նախարարությունը 2011-ին պարտավոր է սկսել որակի ազգային ենթակառուցվածքի բարեփոխումները: Իսկ նույն նախարարության համար գերակա «Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ձեւավորումն ու մեկնարկը», թերեւս, արդյունաբերության ոլորտին համակարգված մոտեցում ցուցաբերելու պետության ձեռնարկած առաջին քայլն է:

Բնապահպանության ոլորտի գերակա խնդիրներից առանձնահատուկ ուշադրության է արժանի ռազմավարական՝ Սեւան լճի մակարդակի բարձրացման հետ կապված ջրածածկվող տարածքներում անտառածածկ տարածքների մաքրումը, ինչպես նաեւ Աշոցքում «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումը:

Անշարժ գույքի կադաստրում այս տարի պետք է ներդրվի իրավունքների եւ տեղեկանքների նկատմամբ միասնական էլեկտրոնային համակարգ եւ ստեղծվի միասնական էլեկտրոնային բազա:

«Զվարթնոց» օդանավակայանի նոր ուղեւորային համալիրի շահագործումը նույնպես նախատեսված է այս տարի, ինչպես նաեւ քայլեր պետք է արվեն երկրում փոքր ավիացիայի զարգացման ուղղությամբ: Խոսքը ներքին օդային տրանսպորտի զարգացման մասին է:

Բավականին շատ են պետական եկամուտների ոլորտում նախատեսվող միջոցառումները: Օրինակ, հարկային հսկողության մեխանիզմների արդիականացման նպատակն է անցում կատարել ավելի պակաս թվով ստուգումների անկացման քաղաքականության: Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացմամբ հնարավորություն պետք է ստեղծվի բարձրացնելու հարկ վճարողների սպասարկման մակարդակը, գործարկելով նոր սպասարկման կենտրոն եւ հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն:

2011-ին մախային հայտարարագրերը էլեկտրոնային դարձնելու գերակա խնդիր է ամրագրված, ինչը նշանակում է, որ մախային հայտարարագրերը նախկին թղթային փոխարեն կներկայացվեն էլեկտրոնային տարբերակով, վճարումները էլեկտրոնային վճարման համակարգերով, կիրառելով էլեկտրոնային ստորագրություն:

Ջրային տնտեսության համակարգում նախատեսվում է Սեւանա լճի մակարդակի բարձրացման նպատակով վերականգնել «Արփա-Սեւան» թունելի որոշ հատվածներ: Այս տարի ծրագրված է նաեւ ավարտին հասցնել Մարմարիկի ջրամբարի շինարարությունը:

Կառավարության սահմանած գերակա խնդիրներից բոլորին մեկ հրապարակման մեջ անհնար է անդրադառնալ: Համենայն դեպս, մեր թվարկածների իրականացման ընթացքին կհետեւենք՝ առայժմ հուսալով դրանք իրականացված տեսնել:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Հոլոքոսթի Copyright կա՞, պարոն Շրյոդեր»

Գերմանացի ճանաչված հրապարակախոս Հենրիկ Մ. Բրոդերը մարտի 2-ին «Վելթի» կարծիք բաժնում պատասխանել է փետրվարի 26-ին ԳԴՀ նախկին կանցլեր Շրյոդերի «Փայներ ալգեմայնե ցայթունգում» տրված հարցազրույցի այն արտահայտությանը, թե՝ Հոլոքոսթի հարաբերականացում կլինի «Հայկական իրադարձությունները» ցեղասպանություն որակելը: **«Ազգի»** ընթերցողներին հիշեցնենք օրեր առաջ մեր թերթի էջերում տեղ գտած հարցազրույցի խնդրո առարկա հատվածը: «Թուրքիայի հանդեպ թերահավատություն կա նաեւ իր պատմությանը հարաբերվելու իմաստով, մասնավորապես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական փոքրամասնության հանդեպ իրականացրած կոտորածների հիշողությամբ, որ շատերը որպես ցեղասպանություն են որակում» թերթի ակնարկին սոցիալ-դեմոկրատ, ԳԴՀ նախկին կանցլերը պատասխանել էր. «Ոմանք դեպքերը նույնիսկ Հոլոքոսթի հետ են նույնացնում: Սա անթույլատրելի է եւ հարաբերականացնում է Հոլոքոսթը, առաջին հերթին գերմանացիները պիտի առարկեն»:

Եվ ահա առարկություն. Բրոդերի «Հոլոքոսթի Copyright կա՞, պարոն Շրյոդեր» վերնագրյալ պատասխանին կից Welt-online հրապարակել է նաեւ Հայոց ցեղասպանության բազմաթիվ ծանոթ լուսանկարներ:

Բաց նամակի ձեւով մտերմիկ շարադրանքում, որ ներկայացնում ենք թեթեւակի կրճատումներով, գերմանացի ճանաչված հրապարակախոսը գրում է.

«Սիրելի Գերհարդ, եթե քեզ ճիշտ հասկացա, խնդիրն այն չէ, թե 1915-ի իրադարձությունների ժամանակ 1,5 միլիոն հայեր մահացան, եւ թուրքերը մինչ օրս պնդում են, թե հայերի դեմ պիտի պատերազմի դիմեին, որովհետեւ վերջիններս ռուսների հետ էին դաշն կնքել, խնդիրն այն է, թե «անթույլատրելի է» եւ «Հոլոքոսթի հարաբերականացում կլինի» հայերի զանգվածային սպանությունները Հոլոքոսթի հետ համեմատելը կամ հավասարեցնելը: Կարծես ուզում ես ասել՝ «Մե՛նք ունենք Հոլոքոսթի հեղինակային իրավունքը (copyright): Եվ չենք թողնի, որ որեւէ մեկը մեզանից խլի»: Հիմա բոլորովին էլ կարեւոր չէ, թե «իրադարձությունները» ինչպես են բնորոշում՝ հայկական ողջակիզում, ցեղասպանություն, թե կոտորած բառերով: Իրողությունն այն է, որ թուրքերը վճռել էին հայկական հարցը վերջնականապես լուծել, ինչպես 25 տարի հետո նացիստները ձեռնարկեցին հրեաների հարցի լուծումը: Զանգվածային երկու սպանությունների միակ տարբերությունը միջոցների ընտրությունն էր: Հայերի մեծ մասը մահվան ախորի ճանապարհին ոչնչացան՝ սաստիկ հյուծված, սովից ու ծարավից, իսկ հրեաներին կյանքից մահ էին ուղարկում արդյունաբերական եղանակով ու ժամանակի խնայողությամբ: Չկա լուրջ մի պատմաբան, որ հրեաների Ողջակիզման պատմականությունը վիճարկի, այնպես, ինչպես չկա որեւէ լուրջ պատմաբան, որ վիճարկում է Հայոց ցեղասպանության պատմականությունը: Թեեւ Դավիթ Իրվինգի նման պատմաբաններ էլ կան, որ Օսվենցիմը չնչին նյութ են դարձնում, կան նաեւ պատմաբաններ, որ կարծում են, թե հայերն են թուրքերին մարտահրավեր նետել, ու սեփական ճակատագրի հարցում իրենք են մեղավոր: Հիմա ուզում եմ իմանալ՝ որտե՞ղ է սկսվում Հոլոքոստը, երբ 6 միլիոնի մասին է խոսքը, մեկուկես միլիոնը բավարար չէ՞: Hightech-ի՞ն (բարձրագույն տեխնոլոգիաներ) մասնակից դարձնենք: Թե Հոլոքոսթը միայն գերմանական պետության փաստերից մեկը չէ, այլ մի ամբակ,

Լուսանկարը՝ Օլգիկ Գրիգորյանի

Բրոդերը 2007-ի ապրիլի 24-ին Քյոլնի Սուրբ Մեծ Մարտին եկեղեցում:

որ գերմանացիներին ու հրեաներին հավերժ կապում է իրար: Թուրքերի՝ հայերի հանդեպ իրականացրածը չէր կարող Հոլոքոսթ լինել այն պատճառով, որ Հոլոքոսթը գերմանակա՞ն հայտնագործություն է, ինչպես «Մելլիսա» ֆիլտրող տոպրակը, կրծկալը կամ հոմեոպատիան: Այն պնդումը, թե Հայոց ցեղասպանության ճանաչումը կարող է Հոլոքոսթը հարաբերականացնել ոչ միայն անպարկեշտ է, այլեւ մաս է կազմում գերմանական շահարկվող «մեղքի քավության հպարտության» (գերմանացի փիլիսոփա Հերման Լյուբբեի բառեզրն է- Ան. Հ.): Բեռլինի Հոլոքոսթի զոհերի հուշարձանի հանդիսավոր բացման 5-ամյակի առիթով ժողովրդական տոնախմբության ժամանակ հռետորներից մեկն այսպես ձեւակերպեց՝ ուրիշ ժողովուրդներ այս հուշարձանի առիթով մեզ կնախանձեին, եւ դա այնպես էր հնչում, ասես ըստ էության ուզում էր ասել՝ նախանձում են մեզ Հոլոքոսթի՝ գերմանական նոր պատմության մեծագույն համայնական նախագծի առիթով: Հենց դու, սիրելի Գերհարդ, որպես գերմանական «Մերձավոր եւ միջին արեւելյան NUMOV» կազմակերպության պատվո նախագահ, որպես Գերմանիայի եւ Մերձավոր ու Միջին Արեւելքի երկրների տնտեսական կապերը խրախուսելու կոչված ծառայող, ճիշտ կլիներ, որ թուրքերին ասեիր, թե ԵՄ արագ ընդունվելու հեռանկարը 1915-ի «իրադարձությունների» համար հայերից վերջապես ներում հայցելն է: Մի քանի հազար թուրք մտավորականներ սա արդեն արել են, ինչի համար անվանարկվել են՝ «դավաճան» որակումով: 4 տարի հետո՝ 2015-ին Հայոց ցեղասպանության 100-ամյակը կլրանա: Անցածն անցյալ կդառնա այն ժամանակ միայն, երբ թուրքերն ընդունեն իրենց պատմական հանցանքն ու պատասխանատվություն սանձնեն: Լավ է ուշ, քան երբեք: 100 տարի տեւեց, մինչեւ Գերմանիան 2004 թվականին նախարար Վիչցորեկ Ցոյլի միջոցով ներում հայցեց կայզերական գեներալ Լոթիար ֆոն Թրոթայի՝ 1904-ին հերերո ու նամա ցեղախմբերի կոտորածների համար (խոսքը 1904-1907թթ-ին կայզերական գերման գաղութարար զորքի՝ 65 000 հերերո եւ 10 000 նամա ցեղախմբերի կոտորածի մասին է Հարավարեւմտյան Աֆրիկայում՝ այսօրվա Նամիբիայում, որ 1985-ին ՄԱԿ-ի զեկույցի համաձայն ցեղասպանություն է որակվել, համարժեք հրեաների հանդեպ նացիստների կատարած Ողջակիզման- Ան. Հ.): «Մենք՝ գերմանացիներս ընդունում ենք մեր պատմական եւ բարոյական պատասխանատվությունն ու հանցանքը, որ ժամանակին արել են մեր նախնիները», ասել էր նախարարը՝ Նամիբիայի Ուոթերբերգում այդ առիթով կազմակերպված միջոցառման ժամանակ: Սա օրինակելի է, եւ մեզ համար նույնիսկ մի եվրոյի ծախս էլ չարժեցավ: Ուստի, սիրելի Գերհարդ, Հոլոքոսթի հարաբերականացումից զգուշացնելու փոխարեն ավելի լավ է՝ թուրք ընկերներիդ խիղճն արթնացրու՝ թե պարտավոր են սեփական պատմությանը տեր կանգնել: Եթե սա կատարես, անմիջապես նորից սոցիալ-դեմոկրատներին կընտրեմ: Քեզանից լավ ոչ ոք չգիտի՝ ամեն մի ձայն կարեւոր է:

Հին բարեկամությամբ՝ քո Հենրիկ Մ. Բրոդեր»:

Հեղինակի մասին- Հենրիկ Մ. Բրոդերը 1946-ին Լեհաստանում՝ լեհ հրեա վերապրողների ընտանիքում ծնված գերմանացի ճանաչված գրող է, լրագրող, հրապարակախոս: 1958-ին Գերմանիա է եկել: Աշխատակցել է «Շպիգել»-ին, «Վելթվոխե»-ին, բեռլինյան «Թագեսշպիգել»-ին: 2011-ից գրում է «Վելթ»-ի, «Վելթ ամ զոնթագի», «Վելթ օնլայն»-ի համար: Արժանացել է հեղինակավոր մի շարք մրցանակների: Բրոդերը բազմիցս որպես գլխավոր բանախոս ելույթ է ունեցել գերմանահայ համայնքի կազմակերպած ապրիլքսանչորսյան հուշահանդեսներում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ԱԶԳ **Միջազգային**

Առայժմ Ռուսաստանը Մերձավոր Արեւելքում կորցնում է զենքի շուկան, իսկ հետո...

Արաբական երկրներում տեղի ունեցող հախուռն իրադարձությունները շահագրգիռ քննության առարկա են ռուսաստանյան լրատվամիջոցներում: Բնականաբար, առաջին հերթին ամեն ինչ բացատրվում է ամերիկացիների միջամտությամբ, որոնք աշխարհաշրջանը պայթեցրին «դեմոկրատականացնելու» նպատակով, որի հեռահար խնդիրն է լրիվ վերահսկողության տակ առնել արաբական նավթն ու դրա փոխադրման ուղիները: Լիբերալ մամուլը տարփողում է այն միտքը, թե մարդիկ հոգնել ու զզվել էին՝ տասնամյակներ շարունակ տեսնելով նույն անձանց ֆիզիոնոմիան: Ռուս նացիոնալիստները շաս կողմերով դեմքերի զարգացումը պայմանավորում են նաեւ մուսուլման եղբայրների «արդարության» որոնումների բազմամյա քրնաջան աշխատանքով: Կարեւորվում է նաեւ այդ գործընթացների մեջ Իրանին ներքաշելու պարագան եւ այլն:

Բնական է նաեւ, որ Կրեմլը չի կարող չանհանգստանալ արաբական հեղափոխությունների կապակցությամբ, որոնց կազմալուծիչ հետեւանքները կարող են զգալ տալ Հյուսիսային Կովկասում եւ Միջին Ասիայում: Ասենք, հենց իր «ավտորիտար» իշխանությունը կարող է դառնա հերթական ծավալուն խարդավանքի զոհ:

Սակայն Ռուսաստանում առանձնակի ուշադրություն նվիրվեց Արեւմուտքի եւ մասնավորապես ԱՄՆ-ի կողմից նորագույն էլեկտրոնային քարոզչական միջոցների (WikiLeaks-ը դրա սոսկ մի մասն էր) մասշտաբային կիրառմանը ի դեմս ամերիկյան «կազմակերպական» զենքի նոր՝ երրորդ սերնդի: Իրոք սա շատերի համար խորհրդավոր, աննկատելի, դժվար ըմբռնելի զինատեսակ է, երբ օտար երկրում զանգվածային քայքայիչ գործողություններ են հրահրվում առանց ավիացիոն թե ծովային միավորումների գործադրման, առանց զորախմբավորումների տեղաշարժման: «Շլացուցիչ են արդյունքները, գրում է ռուսական թերթերից մեկը, երբ օգտագործվում է մարդու եւ հասարակության մասին գիտությունը՝ գաղտնի շտաբներում եւ լաբորատորիաներում կենտրոնացնելով սոցիալական հոգեբանության մասնագետների, մարդաբանների, պատմաբանների, ասվածաբանների, կերպարների եւ քաոսի տեսությունների գիտակների եւ այլն: XXI դարի մոգերը սովորել են պետությունների սահմանները ճեղքել, անվտանգության համակարգերը փոշիացնել՝ ժողովուրդների մեջ դեստրուկտիվացնելով հեղափոխական պայթյուններ, դեռ վերջերս հանգիստ տարածությունները վերածելով շիկացած քաոսի: Այդ նենգ ուժերը կփորձեն կառավարել քաոսը եւ նրանից կերտել աշխարհի նոր կառուցվածք, որում առաջվա պես Արեւմուտքը կկարողանա տնօրինել մոլորակի անբավ հարստությունները»:

Հետաքրքրական է, որ մերձավորարեւելյան խռովությունների հենքի վրա Ռուսաստանում նորովի բացահայտվեց Օբամա նախագահ-քաղաքագետի կերպարը: Որոշ մեկնաբանություններում նա իր առջեւ դրված խնդիրների լուծման ասպարեզում ներկայացվեց որպես մի մարդ, որը խրություն չի դնում ոչ մի միջոցի առջեւ եւ պատրաստ է նույնիսկ դաշինք կնքել սատանայի հետ՝ վիրտուալ թե ահաբեկչի տեսքով: Պետության եւ իր քաղաքական վերնախավի շահերի պաշտպանության որեւէ ստրատեգիական պլան նա ավարտի է հասցնում, ընդ որում կարող է շրջանցել նույնիսկ բարեկամներին ու գործընկերներին: Այս առնչությամբ լրատվամիջոցներում հաճախ է հոլովվում այն միտքը, թե Օբաման, ի տարբերություն նախորդ շաս նախագահների, նվազ է շահագրգռված Իսրայելի շահերով եւ չվարանեց, երբ գահընկեց անելով Մուբարաքին՝ փաստորեն Եգիպտոսը բարեկամական պետությունից վերածեց պոտենցիալ թշնամու: Ու առավել եւս ֆանատսիկ ու արտառոց է հնչում այն վարկածը, ըստ որի Եգիպտոսի թույլտվությամբ Սուեզի ջրանցք թափանցած իրանական երկու ռազմանավերը խորտակելու Իսրայելի սպառնալիքները կապված են Օբամայի այն ծրագրերը խափանելու հետ, որի համաձայն, իբր, նպատակ է դրված «տարրալուծել» Իսրայելը եւ Մերձավոր Արեւելքում ստեղծել միակրոն երուսաղեմակենտրոն կոնֆեդերացիա:

Իսկ հիմա խոսենք այն մասին, թե առաջին հերթին անմիջականորեն ինչ է կորցնում Ռուսաստանը նշյալ աշխարհաշրջանային վայրիվերումներից: Ինչպես օրերս հայտարարեց «Ռոստեխնոլոգիի» պետկորպորացիայի գլխավոր տնօրեն Սերգեյ Չեմեզովը, ՄԱԿ-ի մտցրած պատժամիջոցների բերումով կանգնեցնելով զենքի մատակարարումները հենց միայն Լիբիային, իր երկիրը չի ստանա 4 մլրդ դոլար: Իսկ ընդհանուր առմամբ տարածաշրջանում այդ նույն հոդվածով Ռուսաստանի կրած առեւտրային կորուստները կկազմեն մոտ 10 մլրդ դոլար: Ավելին, եթե զգալի թվով արաբական երկրներ «ավանդաբար» իրենց բանակները հագեցնում էին խորհրդային՝ ռուսական զինատեսակներով, ապա հնարավոր է, որ նոր բեկումներից հետո նրանք առավելապես կողմնորոշվեն դեպի արեւմտյան արտադրողները: Լայն իմաստով խոսքը վերաբերում է այն բանին, որ Ռուսաստանը կարող է էապես կորցնել իր երբեմնի ազդեցության կարեւոր ոլորտներից մեկը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Երկու Ռուբեն, երկուսն էլ...

Մոսկվան միջազգային ֆինանսական կենտրոն դարձնելու՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի մտահղացումը թեւակոխում է իրագործման փուլը: Հրապարակվել են 27 մարդկանց անունները, որոնք խորհրդատու կարգավիճակով օգնելու են երկրի ղեկավարին 10 միլիարդ դոլար կազմող ինվեստիցիոն հիմնադրամը կառավարելու գործում: Այդ գումարը Ռուսաստանի էկոնոմիկայի արդիականացման հռչակված ծրագրի շրջանակում նախատեսված է բարձրտեխնոլոգիական ճյուղերի զարգացման համար:

Ստեղծված խորհրդատվական խումբն իր կազմով միջազգային է, որի մեջ մտնում են հանրահայտ բանկային խմբերի, աուդիտորական ընկերությունների ղեկավարներ, տնտեսագետներ, ֆինանսիստներ եւ այլք: Հրավիրյալների թվում են, օրինակ, Morgan Stanley-ի վարչության նախագահ Ջոն Մաֆը, Deutsche Bank-ի ղեկավար Յոզեֆ Ամերմանը, Citigroup-ի ղեկավար Վիքրամ Փանդիտը եւ ուրիշներ:

Ցուցակի մեջ 27-ից ռուսաստանցի են սոսկ 8-ը: Հաճելի է արձանագրել, որ նրանցից երկուսը մեր հայրենակիցներն են: Հայաստանում լավ են ճանաչում անվանի բիզնեսմեն, ֆինանսիստ, ինտելեկտուալ, «Տրոյկա Դիալոգ» ինվեստիցիոն ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ, Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի նախագահ, Հայաստան 2020 նախագծի կոորդինացիոն խմբի անդամ Ռուբեն Վարդանյանին: Հայտնի է նրա գործարար եւ բարեգործական աշխատանքը նաեւ Հայաստանում: Ինչպես ընդունված է ասել՝ նա ամուր թելերով կապված է իր ծննդավայր Երեւանին, հայրենիքին:

Թերեւս նվազ ճանաչված է Հայաստանում մյուս մասնակիցը՝ խորհրդային նշանավոր տնտեսագետ Աբել Աղանբեգյանի որդին՝ Ռուբենը: Նա ծնվել է 1972 թվականին Նովոսիբիրսկում, ավարտել է Մոսկվայի պետական իրավաբանական ակադեմիան: Ժամանակին «Տրոյկա Դիալոգում» համագործակցել է Ռուբեն Վարդանյանի հետ: Ներկայումս որպես հեղինակավոր ֆինանսիստ գլխավորում է Ռուսաստանի, ԱՊՀ երկրների եւ Արեւելյան Եվրոպայի խոշորագույն արժութային բորսաներից մեկը՝ ЗАО «ММВБ»: Այստեղ ամեն օր ածուրդի են դուրս գալիս արժեթղթեր թողարկող մոտ 700 հաստատություններ՝ 300 մլրդ դոլարի ընդհանուր կապիտալացումով: Դրանց մեջ կարելի է նշել տարբեր բնագավառների խոշորագույն ռուսաստանյան ընկերություններ՝ «Գազպրոմ», «Ռոստելեկոմ», «Սբերբանկ», «Լուկոյլ» եւ ուրիշներ:

Անկեղծ ասած, ես չգիտեմ իր հայրենասեր հոր կամ անվանակից Վարդանյանի պես Ռուբեն Աղանբեգյանն ինչքանով է կապված Հայաստանին: Եթե այդ կապը պատշաճ մակարդակի վրա չէ, ապա ուրեմն վաս են աշխատում Հայաստանի եւ մոսկվացի հայերի լոբբիստական խմբերը: Բոլոր դեպքերում նշանակալից իրողություն է, որ աշխարհի խոշորագույն տերություններից մեկի ղեկավարի մերձավոր շրջապատում կան արժանի հայրենակիցներ, տվյալ դեպքում՝ երկու Ռուբեններ:

Հնդկաստանը՝ զենքի խոշորագույն գնորդ

Ստոկհոլմում գործող խաղաղության հարցերի հետազոտության միջազգային ինստիտուտը (SIPRI) մարտի 14-ին հրապարակել է զենքի ցուցադիր սպառազինությունների համաշխարհային շուկայի վերաբերյալ: Այս կապակցությամբ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 2006-2010 թթ. Հնդկաստանը գլխավորել է զենք ներմուծող երկրների ցանկը:

SIPRI-ի գնահատումների համաձայն, զենքի համաշխարհային մատակարարումների 9 տոկոսը ընկնում է Հնդկաստանին: Նախորդ հնգամյակի համեմատությամբ Հնդկաստանը 21 տոկոսով ավելացրել է սպառազինությունների ներմուծումը:

Տվյալ դեպքում գլխավոր արտահանողը Ռուսաստանն է. նրան է ընկնում Հնդկաստան առաքվող զենքի 82 տոկոսը: Ավիացիոն տեխնիկան կազմում է բոլոր մատակարարումների 71 տոկոսը:

Զենքի խոշորագույն ներմուծողների մեջ 2-րդ տեղը կիսում են Չինաստանը եւ Հարավային Կորեան (զենքի համաշխարհային մատակարարումների մեջ 6-ական տոկոս):

3-րդ տեղում Պակիստանն է, որը 2001-2005 թթ. համեմատությամբ զենքի ներմուծումն ավելացրել է 128 տոկոսով:

Իսկ զինավաճառների մեջ առաջինն է ԱՄՆ-ը, որին 2006-2010 թթ. ընկել է զենքի համաշխարհային մատակարարումների 30 տոկոսը: Ամերիկյան զինատեսակների հիմնական գնորդներն են Ասիայի եւ Օվկիանիայի երկրները:

ԱՊԵՏ

Նոր երկրաշարժ եւ պայթյուններ ճապոնական ԱԷԿ-ում

Ուրբաթ օրվա ուժգին երկրաշարժից եւ ավերիչ ցունամիից հետո երկուշաբթի օրը 6 մագնիտուդով նոր ցնցում է արձանագրվել Ճապոնիայի հյուսիս արեւելքում: Առաջին երկրաշարժից արդեն տուժած «Ֆուկուսիմա-1» ատոմակայանում երեկ տեղի է ունեցել երկու պայթյուն: Վնասվածքներ է ստացել 11 մարդ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով ճապոնական Ջիջի գործակալությանը:

Ատոմակայանի օպերատոր Tokyo Electric Power ընկերության հայտարարության համաձայն, ռեակտորի սառեցման համակարգը լիովին կանգնեցված է, սառեցնող հեղուկի մակարդակն իջնում է: Ասոշիելթեդ պրես գործակալությունը հաղորդում է 3-րդ ռեակտորի սառեցման դժվարությունների մասին:

Մարտի 11-ի ցնցումներից հետո խափանվել էին ճապոնական մի քանի ատոմակայանների սառեցման համակարգերը: Ռեակտորների սառեցման նպատակով ինժեներները սկսել էին օգտագործել ծովի ջուրը: «Ֆուկուսիմա-1»-ում առաջին պայթյունը տեղի էր ունեցել մարտի 12-ին:

Համանման վիճակում է մոտերքում գտնվող «Ֆուկուսիմա-2» ատոմակայանը: Այնտեղ շարքից դուրս են եկել երեք էներգաբլոկների սառեցման համակարգերը: Երկու ատոմակայանների տարածքում մի քանի անգամ արձանագրվել է ճառագայթային ֆոնի ուժեղացում: Ֆուկուսիմայի պրեֆեկտուրայից տարհանվել է 180 հազար մարդ:

Մարտի 11-ի 8,9 մագնիտուդով երկրաշարժի եւ դրա առաջացրած ցունամիի հետեւանքով Ճապոնիայում լիովին կամ մասնակիորեն ավերվել է 63255 տուն: Երկրի արտակարգ ծառայությունների ներկայացուցիչները երեկ հայտարարել են 5 հազար զոհերի եւ մեծաթիվ անհետ կորածների մասին: Սակայն դիտորդների հաշվարկներով, միայն Միագիի պրեֆեկտուրայում զոհերի թիվն անցնում է 10 հազարից (արդեն հայտնաբերվել է 2 հազար դիակ): Իսկ հյուսիսում գտնվող Իվատեի պրեֆեկտուրայում անհետ կորածների թիվն անցնում է 50 հազարից: Վարչապետ Նաոտո Կանի խոսքերով, երկրաշարժից եւ ցունամիից հետո երկիրն ամենալուրջ ճգնաժամն է ապրում 2-րդ աշխարհամարտից ի վեր: Տարերից տուժած շրջանների բնակավայրերում (այդ թվում՝ Տոկիոյում) հաղորդակցությունները եւ փոխադրամիջոցները դեռ կանոնավոր չեն գործում, առկա են պարենի, խմելու ջրի, էներգիայի մատակարարման դժվարություններ:

Քրոուլին հրաժարական տվեց WikiLeaks-ի իրազեկիչի պատճառով

ԱՄՆ պետդեպարտամենտի մամլո կցորդ Ֆիլիպ Քրոուլին հրաժարական է տվել շարքային Բրեդլի Մենինգի կալանքի պայմանների վերաբերյալ արած քննադատության պատճառով: Մենինգին կասկածում են WikiLeaks կայքին կառավարական գաղտնի փաստաթղթեր փոխանցելու մեջ:

Պետքարտուղար Հիլարի Քլինթոնը ընդունել է Քրոուլիի հրաժարականի դիմումը, նշելով, որ «ափսոսանքով» է ընդունում նման որոշում: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

WikiLeaks-ի ենթադրյալ իրազեկիչը 2011-ի մարտին ԱՄՆ զինված ուժերի հրամանատարությանը հասցեագրած նամակում գանգատվել էր Վիրջինիայի նահանգի զինվորական բանտի պայմաններից, որտեղ իրեն պահում են 2010-ի հուլիսից:

Մասաչուսետսի տեխնոլոգիական համալսարանում Ֆիլիպ Քրոուլիին հարց էին տվել Մենինգի բանտային պայմանների մասին, եւ նա Մենինգի հանդեպ Պենտագոնի վերաբերմունքը անվանել էր «ծիծաղաշարժ, անարգասավոր եւ հիմար», ընդսմին ավելացնելով, որ կասկածի տակ չի առնում նրան կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը: Ավելի ուշ Քրոուլին պարզաբանել էր, որ ինքը զուտ անձնական կարծիք է հայտնել: Մի քանի օր անց գրած հրաժարականի դիմումի մեջ Քրոուլին հայտնում էր, որ ինքը «գիտակցում է իր խոսքերի հետեւանքները եւ լիակատար պատասխանատվություն է կրում դրանց համար»:

Մենինգի գանգատին ի պատասխան՝ Պենտագոնը հայտարարել էր, որ բանտային պայմանները որոշվում են նրա անվտանգության շահերով: Նախագահ Բարաք Օբաման իր հերթին ասել էր, որ WikiLeaks-ի ենթադրյալ իրազեկիչը պահվում է «պատշաճ պայմաններում»:

Լիբիան դատապարտել է Արաբական պետությունների լիգայի կոչը

Լիբիայի իշխանությունները խստիվ դատապարտել են Արաբական պետությունների լիգայի որոշումը, որով ՄԱԿ-ի ԱԽ-ին կոչ է արվում Լիբիայի երկնքում հաստատել թռիչքազերծ գոտի:

Երկրի ԱԳՆ ներկայացուցիչը հեռուստաթերում հայտարարել է, որ լիգայի կոչը «արժանի չէ որեւէ մեկնաբանության, քանի որ հակասում է օրենքին եւ լիգայի խարտիային, որն իր պատմության մեջ երբեք միջոցներ չի ձեռնարկել եղբայրական արաբական երկրի դեմ»:

BBC-ն մեջբերում է ԱԳՆ ներկայացուցչի այն խոսքերը, թե լիգայի որոշումը «բխում է Մուսայի անձնական նկրտումներից, որը Եգիպտոսի նախագահ դառնալու հույսեր է փայփայում»: Ակնարկը վերաբերում է Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսային:

ԱԳՆ ներկայացուցիչը նաեւ «անօրինական» է գնահատել լիգայի երկրների հանդիպումից Լիբիայի պատվիրակության հեռացումը:

Թախված արժեքներ

Հովհաննես Տեր-Թադեւոսյանի վաղ շրջանի գեղանկարչությունը

Ազգային պատկերասրահի առաջին հարկի 3 դահլիճներում մեկ շաբաթ է՝ Հովհաննես Տեր-Թադեւոսյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսն է ընթանում: Կազմակերպիչ եւ համակարգող՝ Ազգային պատկերասրահի աշխատակից , նկարիչ-ռեստավրատոր Գագիկ Ամիրխանյան:

Արվեստագետի ծանոթ-անծանոթ լինելը փիչ էական է, երբ ստեղծագործությունները խոսուն են: Ներկայացված 100-ից ավելի գործերի գերակշիռ մասը թվագրված է 1900-1915-ականներով: Էսթետիկորեն հաճելի, բացառիկ խնամքով ու ճաշակով շրջանակված են բոլոր աշխատանքները գունային ընտրությունը արդեն դասական միջավայր ու վերաբերմունք է ստեղծում:

Բնանկարների, քաղաքային ու գյուղական միջավայրային պատկերների գերակշռությունը նկարչի ժանրային նախասիրություններից բացի, նրա գեղագիտական հայացքներն ու գեղանկարչական որոշակի ուղղվածությունն է մատնանշում, իհարկե՝ ցուցադրված ստեղծագործական շրջանի: Հետագա զարգացումների մասին այս ցուցադրությունը պատկերացում կազմելու հնարավորություն չի տալիս, թեեւ մի քանի գործեր կան: Այդ մասին սակայն կարելի է տեղեկանալ նկարչի 120-ամյակին նվիրված պատկերագրից, որ առանձահատուկ մի հրատարակություն է, մանրամասն աշխատված ակադեմիական մոտեցումով: Պատկերագրի տեքստային սվար մասը բովանդակում է նկարչի մասին ընդհանուր տեղեկություններ, արվեստագետի կյանքի ու գործունեության տարեգրություն՝ ուղեկցվող լուսանկարներով, նրա ցուցահանդեսների եւ աշխատանքների՝ պետական հավաքածուների ցանկեր, մատենագրություն, Թադեւոսյանի ստեղծագործության՝ Էլեն Գայֆեճյանի արվեստաբանական ընդարձակ մեկնաբանություն, պատկերային բաժնում նկարչի 200-ից ավելի գործերի գունավոր իլյուստրացիաներն են: Ներկայացված գործերի գերակշռող մասը Գագիկ Ամիրխանյանի անձնական հավաքածոյից են. նա արդեն 20 տարի զբաղվում է Հ. Տեր-Թադեւոսյանի նկարների, նաեւ արխիվային փաստաթղթերի հավաքչությամբ, ռեստավրացիոն աշխատանքներ է կատարել, ընտրել համապատասխան շրջանակներ ու եզրաշրջանակներ :

Պատկերագրում ընդգրկված են նաեւ Ազգային պատկերասրահում պահպանվող եւ մասնավոր այլ հավաքածուներում եղած գործերից: Գիտական աշխատանքները իրականացրել է պատկերասրահի ձեռագրահուշագրային բաժնի վարիչ, գիտաշխատող Անահիտ Խլղաթյանը: Պատկերագիրը եռալեզվյա է (հայերեն, անգլերեն, ռուսերեն), տպագրված է «Տիգրան Մեծ» տպագրատանը, հրատարակումը՝ Գ. Ամիրխանյանի:

Զարմանալի է, բայց բնիկ երեւանցի այս նկարիչը գրեթե անհայտ անուն է ոչ միայն սիրողական, անգամ մասնագիտական շրջանակներին. ըստ որում նրա անունը Հայկական Սովետական Հանրագիտարանում փնտրելն էլ իզուր էր: Մինչդեռ նա հենց խորհրդային շրջանում է լայն գործունեություն ծավալել եւ ակտիվ մշակութային գործիչ է եղել: Ճիշտ է՝ Հայաստանից դուրս, Ուզբեկստանում, բայց աչքառու: Սամարղանդ առաջին անգամ 1915-ին մեկնեց՝ ուսանողական պրակտիկայի, իսկ 1920-ականներից իր կյանքը կապվեց այդ քաղաքին:

Նկարչի՝ փիչ հայտնիության հանգամանքը պարտավորեցնում է թեկուզ ընդհանուր գծերով ներկայացնել անցած դարի հայ դասական գեղանկարչության ակունքներում կանգնած վրձնի այս յուրահատուկ վարպետի կենսագրական որոշ դրվագներ: Սամարղանդը, Տաշքենդը, Մոսկվան նրա աշխատանքային հիմնական գործունեության հանգրվանները եղան: 1918-ին նա հիմնադրեց Սամարղանդի գեղարվեստի առաջին ուսումնարանը: Մասնակցել է համամիութենական գեղանկարչական տարբեր ցուցահանդեսների, տարաբնույթ այլ ցուցահանդեսների տաղավարների նախագծեր հեղինակել, գնահատված գեղանկարիչ ու մշակույթի գործիչ է եղել. արվեստի վաստակավոր գործչի եւ Ուզբեկստանի ժողովրդական նկարչի կոչումներ է ստացել, այդ երկրի Գերագույն խորհրդի նախագահության «Պատվոգրի» արժանացել երեք անգամ: Տարբեր տարիների արժանացել է նաեւ ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 2 մեդալների: Տաշքենդի թատերական ինստիտուտին կից գեղանկարչական բաժանմունքի հիմնադիրն ու ամբիոնի վարիչն էր:

Երեւանում ցուցահանդես բացել է 1968-ին: 1966-ից՝ Տաշքենդի երկրաշարժից հետո մինչեւ մահը՝ 1974-ը բնակվել է Մոսկվայում:

Խորհրդային վաղ շրջանի մշակութային գործունեության կարեւոր դրվագներից մեկը 1921-ին նրա՝ Մոսկվայից Հայաստան գործուղվելը եւ Երեւանում առաջին գեղարվեստի արվեստանոցներ կազմակերպելու աշխատանքն էր, կարճ ժամանակ անց Տեր-Թադեւոսյանի ղեկավարությամբ սկսեց գործել նկարչության եւ քանդակագործության դպրոցը, որ հետագա տարիներին վերափոխվեց նախ՝ Գեղարվեստի (1936 թ.), ապա Փ. Թերլեմեզյանի ուսումնարանի (1943 թ.):

Ազգային պատկերասրահի ներկայիս ցուցադրությունը՝ Տեր-Թադեւոսյանի նախախորհրդային շրջանի նկարչական արձագանքները համահունչ են կյանքային այդ ընթացքների: Դժվար էր պրոսը՝ Կարապետ Տեր-Թադեւոսյանի բազմանդամ ընտանիքի համար: Դեռ մանկուց դերձակի յոթ զավակներից ավագը՝ Հովհաննեսը ճաշակեց կյանքի դառնությունները, երբ հայրը այլեւս կարող չէր արհեստով ընտանիքի պրոսը հոգալ եւ հանապազօրյա հացը մոմավաճառությամբ սկսեց վաստակել: Էրիվանի ուսուցչական սեմինարիայի ուսումը նա կիսատ թողեց: Սակայն արվեստի, նկարչության հակումներն իր մեջ ի ծնե էին: Փոքր տարիքից արդեն մատիանկարներ էր անում բնօրինակներից, նաեւ լուսանկարներից կրկնօրինակներ: Աստիճանաբար, դրամ վաստակելու տարբեր միջոցներ էր փնտրում, մանր աշխատանքներ անում: Մեկնեց Թիֆլիս: Ընդունվեց տեղի գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության նկարչական դպրոց , աշակերտեց Ե. Թադեւոսյանին: Մի քանի տարի անց Մոսկվայի Գեղանկարչության ուսումնարանում էր սովորում, Ա. Մանթաշովի բարեգործական հիմնադրամի թոշակառու էր: Կյանքը դուրս եկավ ծննդավայրի, հայրենի երկրի շրջանակներից: Ուսանողական արձակուրդներին նա հաճախ էր լինում Երեւանում, ճամփորդում Հայաստանի շրջաններով, մասնակցել է Մառի արշավախմբի՝ Անիի պեղումների աշխատանքներին: Կենսագրական հետաքրքրական էջերից է 1912-ի Էրիվանի Քաղաքային ակումբում 92 գործերի ցուցադրությունը, որ քաղաքի պատմության մեջ մնաց որպես առաջին գեղարվեստական ցուցահանդես: 1912-ը եւս մի հետաքրքրական փաստ արձանագրեց նրա կյանքում՝ մի խումբ էնտուզիաստների հետ փոքր Արարատի գագաթ բարձրացավ:

Նկարչի՝ նախախորհրդային շրջանի ստեղծագործությունը ակնհայտ տարբեր է հետագա իր դրսեւորումներից. այս շրջանում կյանքի ու ստեղծագործության միջեւ փոխըմբռնումը հստակ է. ահավասիկ 2 սրահների գործերը, մյուս սրահի աշխատանքները տարբերվում են ինչպես թեմատիկ ընդգրկումով, նաեւ նկարչական ոճով ու մտածողությամբ: Դրանցում առկա են Կենտրոնական Ասիայի մշակույթին հատուկ պատկերաձեւերն ու զարդանախշային մոտիվները, ապրած միջավայրի գունատահայտությունը (կոլորիտը):

Ինչն է բնորոշ այն գեղանկարչությանը, որ մեզ է ներկայացնում Հովհաննես Տեր-Թադեւոսյանի այս ցուցահանդեսը. միջավայրի գեղագիտական ընկալում եւ զգացողություն, գույնի համադրության նուրբ վարպետություն: Վաղ շրջանի գունանանկարի հիմնական հատկանիշը պահի տրամադրության փոխանցումն է նկարչական մակերեսներին: Նրա հայկական աշխարհը տաք է, առողջ, հարազատ ու մտերմիկ: Գունային ինտոնացիան մեղմ է՝ թույլ կոնտրաստներով: Պատկերային կառույցները լուսաստվերների ու գույնի ոչ թանձր, ոչ նոսր վրձնահարվածներից են գոյանում: Այս շրջանում նրա նկարչությունը տպավորատաշտական է, անհատական զգացողությամբ, բնական ու անկաշկանդ: Ինքը ներկա է բնապատկերի, փողոցի ամեն անկյունում, գույնի ու լույսի ամեն բեկորում: Այս շարքում առանձնակի հմայքով է երեւում Էրիվանը, անցյալ դարասկզբի հայկական հին քաղաքը: Մեր հայացքը սահում է ոչ վաղ անցյալի քաղաքի վրայով՝ ահա դեղնամշուշի մեջ թաղված Էրիվանի «Կոնդը» եւ «Ցախի մեյդանը»:

Քոքրաչափ կտավին՝ բանաստեղծորեն ու միաժամանակ ներհուն «ընկողմանած» քաղաքի նրբանկարը՝ աշնանային ծառերի կարմիր ոսկու միջից (հազիվ նշմարելի, նրբաշուք վրձնահարվածներով) երեւացող հին տների, հին կտուրների պատկերով («Էրիվան-1915»): Ահա մեկ ուրիշը, կատարյալ բանաստեղծական մթնոլորտ. քնարական, մեղեդային - երազային լաստեր, լույսի երեկոյացող «քունը» նկարի «երկնքին» բաց-նուրբ դեղնավուն օդային միջավայր է ստեղծում:

Տեր-Թադեւոսյանի բնանկարչությունը մի ուրույն, առանձին աշխարհ է, սա բնության անխաթար վիճակն է, նկարչի հայացքի տրամադրությունը լցնում է միջավայրը, տարածությունը մեր ու բնության միջեւ դարձնում խզելի, մատչելի, սիրելի: Նրա բնանկարը անչափ ինտիմ է, առինքնող՝ հանդարտությամբ, մեղմությամբ. «Աշուն. Պուրակ լճակի մոտ», «Թեղու տակ, թախտին», «Սակլյա (խրճիթ) եւ բակ», «Մեր տունը», «Սեւանի ափին», «Սարեր. Գառնի»: Ահա նրա հոսուն կանաչը՝ ջրի լուսավորությամբ («Ջրհորով բնանկար»), գունային հազվագյուտ շերտազուգորդմամբ «Բնանկար ծառերով»-ը: Գյուղական տեսարաններում նույնպես բնազգացողություններն ուժեղ են: Իրականության ու երազի տրամադրությունների մի թափանցիկ «հյուսվածք» է «Իգդիրը»:

Նատյուրմորտները թեեւ փիչ, բայց տպավորիչ են՝ «Եղրեւանի»-ն, ասես միայն իրեն հատուկ գույնի թանձրությամբ ու փարթամությամբ, տիրապետող է կենտրոնում, մյուսը՝ «Մրգեր սկահակով, գինու շիշ եւ գավաթ», հայացքիդ մակերեսին թափանցիկ պատկեր է գոյացնում, որին նոպաստում է բաժակի տաք դեղնաթույրը: Գունային ներկապնակի Տեր-Թադեւոսյանական ընկալումը առհասարակ բազմազան է, նա օգտագործում է գույնի գրեթե բոլոր նրբերանգները, դրանց համադրությունների (հատկապես դարչնադեղնա-կանաչավունի) գունամթնոլորտը իր տարաբեռնության մեջ շատ ներդաշնակ է: Այդ ներթափանցումները հատկապես բնապատկերին հաղորդում են օդասուն, փխրուն տրամադրություններ: Շատ փոքր ծավալային գործերում անգամ նա կարողանում է զգացնել տալ բնության եւ մարդու երկխոսության ներքին կաղը, սառնալ խորքեր, ինչն, անկասկած, վարպետության նշան է: Էրիվանյան շարքի մի քանի նկարներում, օրինակ՝ «Էրիվան. Բնապատկեր»-ի տեսարանը՝ կենտրոնական մասի բարդու պատկերումով, քաղաքի ամբողջական ընկալման տպավորություն է ստեղծում, հայացքդ «մոլորեցնում». բնանկարը նա կարողանում է, այսպես ասած, ընդարձակել:

Ասվեց, որ ստեղծագործությունների այս շրջանը անմիջական արձագանքներն են իր կյանքի, բայց այստեղ բացարձակապես չի հնչեցվում այդ կյանքի բուն կենցաղային կողմը. «Մեր բակը» նկարի ենթադրվող այդպիսի միջավայրը՝ ցերեկվա բացդեղնավուն օդի մեջ կախված պարանով, խորհում իդիլիկ ու ներհուն է:

Նրա վրձնի հայացքը հաճախ է կանգ առել հայկական եկեղեցիների պատկերներին՝ ահա Անին, Սբ Սարգիսը, Սբ Գայանեն: Կյանքի թիֆլիսյան շրջանը նկարներին հայտնվել է Կովկասի նշանավոր այս քաղաքի հայկական ներկայության հոգեւոր շնչով. հին Թիֆլիսը այստեղ հայկական եկեղեցիների սրբազան ղողանջների գունային թրթռումներ է արձակում՝ «Հին Թիֆլիս. Բեթղեհեմի հայկական Սբ Աստվածածին եկեղեցին», «Կապույտ եկեղեցի»:

Բնանկարի ժանրում Հ. Տեր-Թադեւոսյանի նկարչական ձեւերն ու ոճը հիմնականում հեքիմպրեսիոնիստական արվեստի կնիքն են կրում, ինչը բնական է եւ բնորոշ ժամանակաշրջանին (1909-1915), դիմանկարչության մեջ, սակայն, նա կարծես, ուշ Վերածննդի վարպետների հստակ վրձնահարվածների եւ գունաստեղծման տեխնիկային է հետեւում՝ «Ծերունու դիմանկարը», «Տարեց կինը՝ գլխարկով»:

Դուրս եմ գալիս սրահների լռության միջից՝ վերագտած արժեքների զգացողությամբ. դրանց գունային տրամադրության բարությունը նոր գեղեցկություն գտածի բերկրանքն է պատճառում, համոզում, որ Հովհաննես Տեր-Թադեւոսյանի ստեղծագործական այս շրջանի հայկական շունչը գունային նրբագեղ ու զգայուն շերտ է բերում հայ գեղանկարչության ընդհանուր համապատկերին, հարուստ գունապաստառին:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Փողոց Էրիվանում» 1911 թ.

ԼՈՒՐԵՐ

Դասական «Երգեցողություն» մրցույթի մեկնարկը

Այսօր Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիայի դահլիճում մեկնարկեց դասական երաժշտության բնագավառում «Երգեցողություն» անվանակարգում ՀՀ նախագահի 2010 թ. երիտասարդական մրցանակի թեկնածուների առաջին՝ ընտրական փուլը: Մասնակից 19 երգիչ երգչուհիներից լավագույնները մարտի 18-ին կմասնակցեն եզրափակիչ փուլին: Իսկ թե ովքեր կգրավեն մրցանակային տեղերը, կտեղեկացնենք ավելի ուշ:

Մ.Մ.

«Հայկական մշակույթի օրեր» Քուվեյթում

Ըստ 2009 թ. նոյեմբեր ամսին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի՝ Քուվեյթի պետություն կատարած այցի ընթացքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի պետության կառավարության միջեւ մշակույթի եւ արվեստի բնագավառներում համագործակցության մասին» մշակութային համաձայնագրի, 2011 թ. մարտի 23-28-ը Քուվեյթում անցկացվելու են «Հայկական մշակույթի օրեր»: Այդ օրերին նախատեսվում է, որ համերգներով հանդես կգա վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական պարի անսամբլը, կցուցադրվեն հայ ժամանակակից 7 գեղանկարիչների գործերը, կլինեն բազմաթիվ հանդիպումներ Քուվեյթի պաշտոնատար անձանց ու տեղի հայ համայնքի հետ:

Մ. ՄԱՂԱԲՅԱՆ

«Արմոնտ» թատերական փառատոնը

Ձեւավորված ավանդույթի համաձայն, ապրիլի 3-8-ը Երեւանում, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո, ՀՀ մշակույթի նախարարության եւ Հայաստանի թատերական գործիչների միության աջակցությամբ, կանցկացվի «Արմոնտ» մոնոներկայացումների միջազգային 9-րդ փառատոնը: Առաջին անգամ «Արմոնտ» փառատոնը անցկացվել է 2003 թ., ՀԹԳՄ նախագահ, փառատոնի հիմնադիր Հակոբ Ղազանչյանի նախաձեռնությամբ: Տարեց-տարի փառատոնի շուրջը հետաքրքրությունը ընդարձակվեց ու այն դարձավ ավանդական, ընդգրկելով աշխարհի տարբեր ծայրերից թատերախմբերի, բեմադրիչների ու դերասանների: Այդօրինակ փառատոնը նաեւ հրաշալի հնարավորություններ է ստեղծում երիտասարդ ռեժիսորների, դերասանների, բեմական նկարիչների համար, իրենց հնարավորություններն ու շնորհը ի ցույց դնելու եւ աշխարհում զարգացող մոնոներկայացումներում օգտագործվող նորություններին մոտիկից ծանոթանալու, նաեւ մասնակցելու միջազգային այլ փառատոնների:

Այս տարի, փառատոնի ընթացքում կներկայացվի 17 ներկայացում՝ մասնակցությամբ ՌԴ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսրայելի, Լատվիայի, Եգիպտոսի եւ իհարկե Հայաստանի արտիստների: Փառատոնը բացելու պատիվը տրված է ճանաչված դերասան Ֆիլիպ Հոֆմեյրին (Գերմանիա), որը թատերասերների դատին կհանձնի «Վերթեր» մոնոներկայացումը: Փառատոնի շրջանակներում հանդես կգա նաեւ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվան թատրոնի դերասան Յուրի Կրասկովը «Լսելով հեռուն» մոնոներկայացումով: Ռուսաստանից հանդես կգա նաեւ դերասանուհի Իրինա Եվդոկիմովան «Ոչ ոք» մոնոներկայացումով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՂԱԲՅԱՆ

«Փյունիկը» վայր դրեց գավաթակրի լիազորությունները

Երեկ կայացան ֆուտբոլի Հայաստանի գավաթի քառորդ եզրափակիչ պատասխան երեք հանդիպումները: Առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում վերջին երկու տարիների Հայաստանի գավաթակիր «Փյունիկի» եւ Գյումրիի «Շիրակի» երեւանյան մրցավեճը: Թիմերի առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 1-1: Իսկ դա նշանակում է, որ պատասխան խաղում «Փյունիկին» ձեռնտու էր գոլազուրկ ոչ-ոքին, իսկ շիրակցիները պայքարը շարունակելու համար անպայման պետք է գոլ խփեին:

Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էր «Փյունիկը», սակայն չեմպիոնին չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Միակ վտանգավոր պահը ստեղծվեց 5-rդ րոպեին, սակայն փյունիկցի Գեւորգ Ղազարյանը նոպաստավոր դիրքից վրիպեց:

«Շիրակը» բավականին հմտորեն էր պաշտպանվում՝ դիմելով կտրուկ հակագրոհների: Դրանցից մեկի ժամանակ «Շիրակը» տուգանային հարվածի իրավունք ստացավ եւ բրազիլացի Տիագո Լոպեսը գրավեց Արսեն Պետրոսյանի պաշտպանած դարպասը: Նշենք, որ Արսենը «Շիրակի» գլխավոր մարզիչ Սամվել Պետրոսյանի կրտսեր որդին է: Ահա այսպիսի յուրօրինակ մրցակցություն էր ստացվել հոր ու որդու միջեւ:

Բաց թողած գոլից հետո փյունիկցիները շատ ջանք ու եռանդ ներդրեցին պարտությունից խուսափելու համար, սակայն այդպես էլ չկարողացան գոլային իրական պահ ստեղծել: Գյումրեցիները դարպասապահ Իգոր Լոգվինովի գլխավորությամբ հուսալիորեն պաշտպանվելով, խաղը հասցրին հաղթական ավարտի: Ի դեպ, այդ հանդիպումը գավաթի մրցաշարերում «Փյունիկի» հոբելյանական՝ 100-rդ խաղն էր, որն անհաջող դասավորվեց թիմի համար: Իսկ «Շիրակը», որ դեռեւս գավաթակրի տիտղոսին չի արժանացել, կշարունակի պայքարը պատվավոր մրցանակի համար:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Ֆելիքս Խոջոյան («Շիրակ»)-Դժվար խաղ էր, իսկական գավաթային մրցավեճ: «Փյունիկը» հաստկամես առաջին խաղակեսում շատ լավ խաղաց, սակայն մեզ հաջողվեց գոլ խփել ու հաղթել: 2-rդ խաղակեսում կարողացանք կարգավորել խաղը, վերադասավորել ուժերը եւ համատեղ ջանքերով հաջողության հասնել: Կարծում եմ, որ «Փյունիկի» արգելքը հաղթահարելուց հետո դեպի գավաթային բարձունքը տանող ճանապարհը մեզ համար բաց է ու հետագա հանդիպումներում ավելի հեշտ կլինի խաղալը:

Վարդան Մինասյան («Փյունիկ»)-Նախ շնորհավորում եմ «Շիրակին» հաջորդ փուլ մտնելու համար: Չկարողացանք մեզ բնորոշ խաղ ցուցադրել, թիմն ընդհանուր առմամբ վատ հանդես եկավ: Սա ինձ անհանգստացնում է, քանի որ փյունիկցիների մեծամասնությունը հավակնորդներ են: «Շիրակն» ավելի արժանի էր հաղթանակի, քանի որ գյումրեցիների մոտ հաջողության հասնելու ցանկությունը մեծ էր: Այս խաղում կազմն ուժեղացնելու համար մեզ հարձակվող էր անհրաժեշտ, սակայն պահեստայիններն նստարանին նման ֆուտբոլիստ այսօր չկար: Բրազիլացի Մարկոսն արդեն ապաքինվել է վնասվածքներից ու առաջնության հաջորդ տուրում կխաղա: Դավիթ Մանոյանը եւս ապաքինվում է: Մարտի 18-ին նա կվերադառնա Հայաստան:

Կիսաեզրափակիչում «Շիրակի» մրցակիցը կլինի «Ուլիսը», որը պատասխան խաղում էլ «Հրազդանում» կրկին «Արարատին» հաղթեց 1-0 հաշվով: Այս անգամ ուլիսցիներից միակ գոլի հեղինակը Միհրան Մանասյանն էր, որն աչքի ընկավ 30-rդ րոպեին:

Պայքարը կշարունակի նաեւ «Բանանցը», որն առաջին խաղում 3-0 հաշվով հաղթելով «Գանձասարին», հաջորդ փուլի ուղեգիր լուրջ հայս էր ներկայացրել: Պատասխան խաղից առաջ «Գանձասարի» գլխավոր մարզիչ Աբրահամ Խաչատրյանը հույս էր հայտնել հաղթահարել «Բանանցի» արգելքն ու մտնել կիսաեզրափակիչ: Սակայն կապանցիներին միայն մեկ անգամ հաջողվեց գրավել մրցակցի դարպասը: Խաղավարից 5 րոպե առաջ աչքի ընկավ Արսեն Ավետիսյանը:

Կիսաեզրափակիչում «Բանանցի» մրցակիցը հայտնի կդառնա այսօր կայանալիք «Իմպուլս»-«Միկա» հանդիպումից հետո: Առաջին խաղում «Միկան» հաղթել էր 3-0 հաշվով: Այսօրվա հանդիպումը կանցկացվի «Բանանցի» մարզադպրոցի արհեստական խոտածածկով խաղադաշտում:

Նոկաուտ արվամոլության մեղադրանքի դիմաց

Առաջին միջինքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Միգել Կոտոն հաջողությամբ պաշտպանեց տիտղոսը՝ 12-rդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթելով քաշային երկու կարգերում չեմպիոնական գոտիների նախկին տեր, նիկարագուացի Ռիկարդո Մայորգային:

Նշենք, որ մենամարտից առաջ բուքմեյքերները հաղթողի գլխավոր հավակնորդ էին համարում պուերտոռիկացի Միգել Կոտոյին: Նրա հաղթանակի դիմաց խաղադրույքներ էին ընդունվում 1,1 գործակցով, մինչդեռ Մայորգայի հաղթանակը գնահատվում էր 6,5 գործակցով:

Մենամարտին նախորդած մամուլի ասուլիսի ժամանակ կրքերը բավականին բորբոքվել էին միմյանց հասցեին արված վիրավորական արտահայտությունների պատճառով: Մայորգան հանել էր մարզաշապիկը ու լրագրողների մոտ հպարտացել էր մարմնի կառուցվածքով, որին ի պատասխան Կոտոյի մարզիչ Էմանուել Ստյուարդը հետեւյալն էր ասել. «Կարող ես լրիվ հանվել, նույնիսկ մերկ հետույքդ ցուցադրել, սակայն դա էլ քեզ չի օգնի հաղթել: Մենամարտից հետո դու կսկսվես եւ շորերդ չես հանի: Դու նոկաուտից հետո պառկած կմնաս ռինգում, իսկ մենք կտոնենք հաղթանակը»:

Վրդովված Մայորգան Կոտոյին արվամոլ անվանեց. «Համոզված եմ, որ Կոտոն կիսով չափ արվամոլ է: Լսել եմ, որ Ռիկի Մարտինը պարողների խումբ է հավաքագրում: Երբ ես կհաղթեմ քեզ, կարող ես նրա մոտ փորձի գնալ»:

Մասնագետների կարծիքով, հաղթանակի համար Կոտոյին 4 ռաունդը բավական էր: Սակայն Մայորգան դիմացավ 12 ռաունդ: Թեեւ Կոտոն բավականին ագրեսիվ էր գրոհում, սակայն Մայորգային հաջողվում էր դիմագրավել մրցակցի հարվածներին: 12-rդ ռաունդում Կոտոյի հուժկու հարվածից հետո Մայորգան կորցրեց հավասարակշռությունը եւ ընկավ հատակին: Նա կարողացավ վեր կենալ ու փորձեց շարունակել մենամարտը, սակայն անմիջապես հասկանալ տվեց մրցավարին, որ չի կարող մենամարտել:

Անհաջողություններ հետապնդում են «Արսենալին»

Չեմպիոնների լիգայից դուրս մնալուց հետո Լոնդոնի «Արսենալը» անհաջողության մատնվեց նաեւ Անգլիայի գավաթի խաղարկությունում: Քառորդ եզրափակիչում «Արսենալը» 0-2 հաշվով զիջեց «Մանչեսթր Յունայթեդին»: Հանդիպման ելքը վճռեցին Ֆաբիոյի եւ Ռունիի խփած 2 անպատասխան գոլերը:

Ապրիլի 17-ին կայանալիք կիսաեզրափակիչ խաղում «Մանչեսթր Յունայթեդը» կմրցի «Մանչեսթր Սիթիի» հետ: Վերջինս սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնեց «Ռեդինգին»:

Կիսաեզրափակիչ մյուս զույգը կազմել են «Սթոք Սիթին» ու «Բոլտոնը»: «Սթոք Սիթին» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց «Վեստ Հեմին», իսկ «Բոլտոնը» հյուրընկալվելիս առավելության հասավ «Բիրմինգհեմի» նկատմամբ (3-2): Գավաթի եզրափակիչ խաղը կկայանա մայիսի 14-ին:

ՇԱԽՄԱՏ

Լեւոն Արոնյանի հաղթական մեկնարկը

Լեւոն Արոնյանը հաղթանակով մեկնարկեց Մոնտե-Կառլոյում 20-rդ անգամ անցկացվող շախմատի «Ամբեր» մրցաշարում: Հոլանդացի Անիշ Գիրիին հայ շախմատիստը հաղթեց արագ եւ «կույր» շախմատի պարտիաներում: 2-rդ տուրում Արոնյանի մրցակիցը ԱՄՆ-ում բնակվող ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրան էր: Մրցակիցները սկզբում մրցեցին «կույր» շախմատում: Արոնյանը սեւերով հաղթանակ տարավ: Իսկ արագ շախմատի պարտիայում Լեւոնը սպիտակներով հաշտություն կնքեց:

Երեկ կայացած 3-rդ տուրում Լեւոն Արոնյանը մրցեց Մագնուս Կառլսենի հետ: «Կույր» շախմատի պարտիան 37-rդ քայլին ավարտվեց ոչ ոքի: Արագ շախմատի պարտիայում էլ սեւերով Արոնյանը 44-rդ քայլին հաշտություն կնքեց մրցակցի հետ: Այսօր Արոնյանը կխաղա Վասիլի Իվանչուկի հետ:

Հաջող են մեկնարկել նաեւ Ալեքսանդր Գրիշչուկն ու Մագնուս Կառլսենը: Գրիշչուկը մեկնարկային տուրում 2-0 հաշվով պարտության մատնեց Վլադիմիր Կրամնիկին, հաջորդ մրցախաղում 1,5-0,5 հաշվով առավելության հասավ Բորիս Գելֆանդի նկատմամբ: Կառլսենը նախ 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Հիկարու Նակամուրային, ապա շահեց Վուղար Հաշիմովի հետ անցկացրած երկու պարտիաներն էլ: Մյուս մրցախաղերում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Իվանչուկ-Հաշիմով՝ 0-2, Անանդ-Թոփալով՝ 1,5-0,5, Կարյակին-Գելֆանդ՝ 0-2, Թոփալով-Կարյակին՝ 1-1, Կրամնիկ-Անանդ՝ 1-1, Գիրի-Իվանչուկ՝ 1-1:

Մխիթարյանը միջին դիրքերում է

Ռեյկյավիկում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 6 տուրից հետո վաստակած 3,5 միավորով ընթանում է 68-rդ տեղում: Անհաջող մեկնարկից հետո Մխիթարյանը 3 անընդմեջ հաղթանակ տոնեց Դագուր Ռագնարսոնի, Սերխիո Հուգուեթի եւ Դանիել Կովաչեւի նկատմամբ: 5-rդ տուրում հայ շախմատիստը հաշտություն կնքեց Սոռիե Միլիեթի հետ, իսկ հաջորդ պարտիայում պարտվեց Վլադիմիր Սվեշնիկովին:

5,5 միավորով առաջատարն ուկրաինացի Յուրի Կուզուբովն է: Նրան կես միավոր են զիջում Լյուկ Մակշեյնը, Ռոբերտ Հեսը, Սթելիոս Հալկիասը եւ Սիմոն Վիլիամսը:

Մովսիսյանն առայժմ փոխարինման է դուրս գալիս

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը «Կրասնոդարի» կազմում նորամուտը նշեց ՌԴ առաջնությունում: Մեկնարկային տուրի խաղում «Կրասնոդարը» Մախաչկալայում ոչ-ոքի (0-0) խաղաց տեղի «Անժիի» հետ: Մովսիսյանն ընդամենը 16 րոպե անցկացրեց խաղադաշտում՝ փոխարինման մտնելով Պիկուշչուկի փոխարեն:

Պաշտոնական մրցումներում սա Մովսիսյանի 2-rդն խաղն էր «Կրասնոդարի» կազմում: Առաջինը նա անցկացրել էր «Ամկարի» հետ գավաթի 1/8 եզրափակիչ խաղում, որում փոխարինման դուրս գալով գոլային փոխանցում էր կատարել:

Խաղադաշտում Մովսիսյանի քիչ ժամանակ անցկացնելը որոշակի մտահոգություն է պատճառում նրա մարզավիճակի առումով: Առանց այն էլ Յուրան «Ռանդերսից» տեղափոխվելու հետ կապված խնդիրների պատճառով ուշ էր սկսել մարզումները: Սակայն մյուս կողմից, գուցե լավ է, որ մինչեւ Ռուսաստանի հավաքականի հետ մրցախաղը Մովսիսյանը քիչ է խաղում, ինչը հնարավորություն կընձեռի զերծ մնալ հնարավոր անցանկալի վնասվածքներից: Չէ՞ որ չի բացառվում, որ Մովսիսյանին միտումնավոր վնասվածք հասցնեն, որպեսզի նա չկարողանա մասնակցել մարտի 26-ին Ռուսաստանի հավաքականի հետ կայանալիք վճռորոշ հանդիպմանը:

Զեբելյանը կհրավիրվի հավաքական

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նախկին հարձակվող Ռոբերտ Զեբելյանը նոր մրցաշրջանում հանդես կգա Մինսկի «Դինամոյի» կազմում: 26-ամյա ֆուտբոլիստը 2 տարվա պայմանագիր է կնքել բելառուսական ակումբի հետ: Հաջող հանդես գալու դեպքում նրա պայմանագրի ժամկետը եւս մեկ տարով կարող է երկարաձգվել:

Զեբելյանը նախկինում հանդես է եկել ռուսաստանյան «Ժեմչուժինա», «Կուբան», «Խիմկի» եւ «Բալթիկա» թիմերում: Ի դեպ, ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը պատրաստվում է մեկնել Սոչի, որտեղ ուսումնամարզական հավաք է անցկացնում Մինսկի «Դինամոն» եւ դիտել Զեբելյանի խաղը՝ վերջինիս հավաքական հրավիրելու նպատակով:

Ռոբերտ Զեբելյանը Հայաստանի ազգային հավաքականում 7 խաղ է անցկացրել: Նա նորամուտը նշել է 2006-ի նոյեմբերի 15-ին Հելսինկիում Ֆինլանդիայի հավաքականի հետ կայացած Եվրոպայի առաջնության ընտրական մրցախաղում: Զեբելյանն այդ խաղում հավաքականի մեկնարկային կազմում էր: 78-rդ րոպեին նրան փոխարինեց Արման Քարամյանը: Ազգային հավաքականում առայժմ վերջին հանդիպումը Զեբելյանն անցկացրել է 2008-ի հոկտեմբերի 15-ին Բոսնիայի հավաքականի հետ կայացած աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում:

Ոստիկանը սպանեց պատանի բռնցքամարտիկին

Բրազիլական բռնցքամարտի ապագա «աստղերից» մեկը՝ 16-ամյա բռնցքամարտիկ Տայրոնե Սիլվան սպանվել է ոստիկանի կրակոցով: Բռնցքամարտիկը վիճաբանել էր ոստիկանի հետ, որը հանել էր ատրճանակն ու սպանել նրան: Սպանության այլ մանրամասներ հայտնի չեն: Ներկայումս ոստիկանը կալանավորված է:

Ողբերգության առիթով Բրազիլիայի բռնցքամարտի ֆեդերացիան հաղորդագրություն է տարածել, որում մասնավորապես ասվում է. «Մեր երկիրը կորցրեց եւս մեկ հեռանկարային մարզիկի: Նա երազում էր անվանի բռնցքամարտիկ դառնալ եւ մասնակցել 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիադային»:

Ցավոք, Բրազիլիայում մարզիկների սպանության դեպքերը եզակի չեն: Մոտ մեկ ամիս առաջ սպանվել էր «Կորինթիանսի» 19-ամյա ֆուտբոլիստ Վիլյամ Մորաիսը: Դեպքը տեղի էր ունեցել Բելու Օրիզոնտի քաղաքում, երբ ֆուտբոլիստին ցանկացել էին կողոպտել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հեմատոմ

Գյումրու կենտրոնի տեղափոխվելիք ծառերի եւ Արագած փողոցի խնդիրների մասին

Քաղաքի ութ ՀԿ-ների հայտարարությունը

Շարունակելով Գյումրի քաղաքի պատմական կենտրոնի կեսային կառուցապատումը՝ խախտելով քաղաքաշինական եւ բնապահպանական բազմաթիվ նորմեր, քաղաքային իշխանություններն ըստ էության արհամարհում են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հողային օրենսգրքի, Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի ու գոտիավորման նախագծի պահանջները: Շաբաթ օրը ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գեւորգյանին, քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին, Շիրակի մարզպետին եւ Գյումրու քաղաքապետին ուղղված այս բովանդակությամբ հայտարարությամբ են հանդես եկել Շիրակի մարզկենտրոնի ութ ակտիվ հասարակական կազմակերպություններ:

Քաղաքի Վարդանանց հրապարակի եւ Արագած ճեմափողոցի քաղաքաշինական վիճակի ու ոլորանավորվող աշխատանքների վերաբերյալ հայտարարությունն ընդունվել է այդ ՀԿ-ների, մի շարք ԶԼՄ-ների եւ ՏԻՄ ներկայացուցիչների՝ քաղաքի գլխավոր ճարտարապետի, դեմոգրաֆի, քաղաքապետի գլխավոր խորհրդականի եւ քաղաքաշինության բաժնի պետի մասնակցությամբ մեկ օր առաջ կայացած հանրային քննարկումից հետո: Ի դեպ, դա այսօր իշ պատահող եւ ուրախացնող դեպք էր, երբ քաղաքային իշխանության ներկայացուցիչները եկել էին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համայնքային կառուցության խնդիր քննարկելու, լսելու նրանց եւ ներկայացնելու իրենց փաստարկները: Սակայն, ինչպես երեւում է, կայացած խոսակցությունը մի կողմի, մասնավորապես բնապահպանների մտահոգությունները չի փարատել:

«Գյումրու Վարդանանց հրապարակը (նախկին Ազատության, Կենտրոնական, Օգոստոսի 23), որը ըստ գոտիավորման նախագծի նախատեսված էր որպես կանաչ հրապարակ,- մասնավորապես ասվում է հայտարարության մեջ,- 2008 թ. պատվեց ֆարե գորգով եւ դա քաղաքային բյուջեից խլեց ավելի քան 180 մլն դրամ (ավելի քան կես միլիոն դոլար):

Ջերազի եւ Սպանդարյան փողոցները հրապարակին հարող հատվածում իրար միացնող մոտ 80 մ ճանապարհահատվածի կառուցման համար ծախսվեց 52 մլն դրամ եւ հատվեցին ավելի քան 40 ծառ ու թփեր: Վերջինիս հարեւանությամբ՝ հրապարակի եւ այդ փողոցի արանքում թողնված, այսպես կոչված, կանաչ կղզյակը, որը բաղկացած է միայն ութ եղեւնիներից, այսօր գտնվում է քաղաքային իշխանությունների քաղաքաշինական հետաքրքրությունների էպիկենտրոնում. դրանք քաղաքապետարանը նախատեսում է տեղափոխել...»: Անդրադառնալով քաղաքի գլխավոր ճարտարապետի ներկայացրած հիմնավորմանը, թե քանի որ այդ եղեւնիները կորցրել են իրենց «էսթետիկական տեսքը», փակում են ճարտարապետական մեծ արժեք ունեցող շենքերի ճակատները եւ թույլ չեն տալիս ամբողջացնել հրապարակի անսամբլը, ուստի ենթակա են տեղափոխման եւ ցածր թփերով ու ծաղիկներով փոխարինման, հայտարարության հեղինակները հիշում են 2007 թ. հոկտեմբերին քաղաքի Անկախության հրապարակի յոթ եղեւնիների հատումն ու դրանց փոխարեն գնդաձեւ ակացիաներ տնկելու համայնքային ավագանու մինչեւ օրս չիրականացված որոշումը: Համայնքային բյուջեի հնարավորությունների տեսակետից էլ անհասկանալի է գնահատվում քաղաքային իշխանությունների կենտրոնացումը ծառերի տեղափոխման խնդրի վրա, երբ դրանցից յուրաքանչյուրի տեղափոխման ծախսը, ըստ կատարված նախահաշվի, կազմում է 313.714 դրամ:

Հարցադրումների մյուս խումբը վերաբերում է Գյումրու Արագած ճեմափողոցին, նրա կառուցապատման խնդիրներին: Մասնավորապես, «2010 թ. հասարակության ջանքերով հազիվ դադարեցվեց Արագած ճեմափողոցի կանաչ տարածքում իրականացվող շինարարությունը եւ չնայած ՀՀ բոլոր մակարդակների պատասխանատու պաշտոնյաներին հղված բողոքներին, մինչեւ օրս էլ այդ հարցը չի սացել իր վերջնական լուծումը... չնայած որ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը նախկինում հստակ արտահայտել էր իր տեսակետը այս հարցի վերաբերյալ (կառուցապատման վերաբերյալ Գյումրու քաղաքապետի 2009 թ. փետրվարի 26-ի N 300-Ա որոշումը գտել էր ոչ իրավաչափ եւ առաջարկել էր վերացնել իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների հետեւանքները)»:

Հայտարարության հեղինակները քաղաքային իշխանությանն առաջարկել են հրաժարվել Վարդանանց հրապարակում եւ Արագած ճեմափողոցում ածող եղեւնիները տեղափոխելու մտքից՝ այն համարելով չիմնավորված, չարդարացված եւ պարզապես համայնքային միջոցների վատնում, Շահումյան-188 շենքի եւ Վարդանանց հրապարակի միջեւ գտնվող նախկին բացօթյա սրճարանի տարածքը կանաչապատման եւ բարեկարգման նպատակով, օրենքով սահմանված կարգով տրամադրել Գյումրու բնապահպանական ոլորտի ՀԿ-ներին՝ պահպանելով համայնքային պատկանելությունը, Արագած ճեմափողոցի համար օրենքով սահմանված կարգով մշակել կառուցապատման եւ բարեկարգման մեկ համալիր սխեմա՝ հաշվի առնելով գլխավոր հատակագծի եւ գոտիավորման նախագծի պահանջներն ու չափորոշիչները, բացառել այս փողոցի ու նրան հարող տարածքների հետագա կառուցապատումը գազոնների ու կանաչ տարածքների հաշվին եւ այլն: Կարեւորվել է կենսամիջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին այսուհետ հանրության պատշաճ իրազեկումը եւ հասարակական քննարկումների անցկացումը՝ համաձայն Կառավարության 28.10.1998 թ. 660-րդ որոշման պահանջների, քաղաքի շահագրգիռ հասարակությանը մասնակից դարձնելով այդ փոփոխությունների կայացման գործընթացին:

Փաստաթուղթը ստորագրած կազմակերպությունների թվում են Գյումրու «Բիոսոֆիա» բնապահպանական, «Գեոֆոն» գիտական-բնապահպանական, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, «Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» եւ այլ ՀԿ-ներ:

Գ. Մ.

Երեկո՝ նվիրված Հրանտ Դինքի հիշատակին

Կամերային երաժշտության տանը երեկ «Երկիր» միությունը կազմակերպել էր հուշ-երեկո՝ նվիրված պոլսահայ լրագրող եւ իրավապաշտպան Հրանտ Դինքի հիշատակին: Հրանտ Դինքի գործունեությանն անդրադարձավ թուրագետ Ռուբեն Մելքոնյանը: Երեկոյին ներկա էին նաեւ թուրք լրագրողներ, մտավորականներ Ջենգիզ Աքթարն ու Ալի Բայրամօղլուն: Միջոցառմանը մանրամասն կանդրադառնանք վաղվա համարում:

Ռ. Պ.

Իվ Լարոկի երեւանյան երեկույթի 2 տոմս՝ Orange-ի սմարթֆոնների գնորդներին

Orange-ում կրկին երաժշտության տոն է: Ինչպես միշտ, ընկերությունը հնարավորություն է տալիս իր բաժանորդներին մասնակից դառնալ ընկերության երաժշտական ծրագրերին: Orange-ը Ֆրանկոֆոնիայի փառատոնի շրջանակներում կազմակերպվող աշխարհահռչակ DJ Իվ Լարոկի երեւանյան համերգի գլխավոր գործընկերն է: Այդ առթիվ Orange-ի որեւէ խանութից մարտի 14-ից մինչեւ մարտի 17-ը յուրաքանչյուր սմարթֆոն գնած յուրաքանչյուր հաճախորդ կստանա Իվ Լարոկի խելահեղ երեկույթի 2 տոմս: Երեկույթը տեղի է ունենալու մարտի 18-ին, ժամը 23-ին, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Տոմսեր կստանան սմարթֆոնների միայն առաջին 75 գնորդները: Տոմսերը կարելի է ստանալ Հյուսիսային պողոտա 1 հասցեում գտնվող Orange-ի գլխավոր խանութից մինչեւ մարտի 18-ի երեկոյան ժամը 8-ը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների համաձայն մշակվում է «Էնգելս Թումանյան» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ Սյունիքի մարզի Դավիթ-Բեկ համայնքի վարչական տարածքում՝ Քաջուն գետի վրա գտնվող տարեկան կարգավորիչ ջրամբարից բաց թողնված ելքերի վրա «Գեորգավան ՀԷԿ-1» ՓՀԷԿ-ի կառուցման ջրառի ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին, ժամը 17-18-ը դիմել բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ., մարտի 19-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվություն

«Լիզա» իրավական, գենդերային, մշակութային հիմնադրամի

1. 2010թ.-ի գործունեության մասին
2. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Լիզա» իրավական, գենդերային, մշակութային հիմնադրամ:
Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի "25" հուլիսի 2000թ. թիվ 894 հրամանով, պետական գրանցման վկայական՝ 118 եւ Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից "19" հոկտեմբերի 1994թ., պետական գրանցման վկայական՝ 286.02000298
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ Հանրապետության 49/10 հեռ. 524419:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Իրինա Գալստյան
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ չեն օգտվել հիմնադրամի միջոցներից
6. Աշխատակազմը՝
Մարիամ Օհանյան, աշխատավարձի ձևով
Գայանե Բաղալյան, աշխատավարձի ձևով
7. Իրականացված ծրագրերը՝
«Կին» կինոփառատոնի կազմակերպում, սոցիոլոգիական հետազոտության անցկացում, ֆիլմերի նկարահանում:
8. Ֆինանսավորման աղբյուրները՝
«Բաց Հասարակության Ինստիտուտ» – 556130 դրամ, «Գլոբալ ֆանդ ֆո վուման» – 34544500 դրամ, ՀՀ Մշակույթի նախարարություն - 800000 դրամ, «ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ» - 4790598 դրամ, Կանադայի դեսպանատուն - 1801486 դրամ:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 10672010 դրամ:
10. Տարեկան հաշվետվությունը հաստատված է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ արձանագրություն թիվ 1 20.01.2011թ.
11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտ չի իրականացվել քանի որ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվների գումարը փոքր է 10000000 (տասը միլիոն դրամից)

Գործադիր տնօրեն՝ *Մ. Օհանյան*
Հաշվապահ՝ *Գ. Բաղալյան*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական ակնաբուժության նախագիծ » բարեգործական հիմնադրամ
2010թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ » ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2.Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 264.160.05889 13.08.2002թ.,պետական գրանցման վկայական 03 Ա 055637:
3.Հիմնադրամի գտնվելու վայրը ՝ Ք. Երևան, Այգեստան փ.5,տ.7,հեռ . (010)559068
7. Իրականացված ծրագրերը՝ «Լույս հայի աչքերին» բարեգործական ծրագիր
(ա) կանխարգելում/հետազոտություն/բուժում/վիրահատություն/ակնոցների տրամադրում: ՀԱՆ-ի գործունեության արդյունքում 2010 թ. ընթացքում ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի Արմավիրի մարզերում, ԼՂՀ-ում և Երևանում ակնային ընդհանուր հետազոտություն է անցել 28592 մարդ, դուրս է գրվել և բաժանվել 7044 ակնոց: ՀԱՆ-ի Աչքի շարժական հիվանդանոցում վիրահատվել է 1043 մարդ, 368ը ստացել է լազերային բուժում: Դպրոցներում ակնաբույժների հասցեական հետազոտությունների արդյունքում ստուգվել է 12626 աշակերտ: Անհասության ռետինոպաթիայի նորածնային սքրինինգի բուժման ծրագրի շրջանակներում անցկացվել է 810 ակնային ստուգում, առվել է 26 լազերային վիրահատություն:
(բ) մասնագիտական վերապատրաստում/դասընթացներ՝ վերապատրաստվել են 40 ընտանեկան բժիշկ և 20 դպրոցների և 133 բուժակ-մանկաբարձական կետերի բուժքույր, անցկացվել է անհասության ռետինոպաթիայի կանխարգելման միջազգային համաժողով դասընթացներ:
(գ) հանրային իրազեկություն/տեղեկատվություն/կրթություն՝ բնակչությանն են բաժանվել 6000-ից ավել կրթական բրոշյուրներ աչքի հիվանդությունների և աչքի խնամքի վերաբերյալ:
8. Ֆինանսավորման աղբյուրներն են հանդիսացել հետևյալ նվիրատվությունները՝
▼ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական ընկերություն, ԱՄՆ- 112 025 հազար դրամ
▼ Մեծ Բրիտանիայի դեսպանատուն /Ռոբերտ Բերնսի կոմիտե/ -1 890 հազար դրամ
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 282 301 հազար դրամ
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 282 301 հազար դրամ
11. Կից ներկայացնում ենք «Բեյքեր-Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի իրականացրած աուդիտորական եզրակացությունը:
Հաստատված է
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ »
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի հոգաբարձուների խորհրդի 2011թ. մարտի 10-ի թիվ 02-2011 որոշմամբ:

Ղեկավար *Նուրե Եղիազարյան*
Գլխավոր հաշվապահ *Աննա Նազարյան*

11մարտի 2011թ.
N021104
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայկական ակնաբուժության նախագիծ»
Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուներին

Մենք իրականացրել ենք «Հայկական ակնաբուժական նախագիծ» Բարեգործական հիմնադրամի՝ կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրենության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՍՄ) համաձայն պատրաստման և արժանահավաս ներկայացման համար պատասխանատու է տնօրենությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում «Հայկական ակնաբուժական նախագիծ» Բարեգործական հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավաս ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել աուդիտորական ընթացակարգեր, որոնք կիամապատասխանեն տվյալ հանգամանքներին, սակայն «Հայկական ակնաբուժական նախագիծ» Բարեգործական հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակ չեն ունենա: Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացության համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով 2010թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի համապատկիպ ֆինանսական արդյունքների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավաս են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկեր «Հայկական ակնաբուժական նախագիծ» Բարեգործական հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին: Հաշվապահական հաշվառումը վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին և հաշվապահական հաշվառման կանոններին համապատասխան, իսկ ՖՀՆՍՄ-ը կիրառվում են անվերապահորեն:

Աուդիտոր Մ.Մկրտչյան *11.03.2011թ.*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: